Ծ Ր Ա Գ Ի Ր

<<ԱՐԵՎՇԱՏԻ ՄԵՏԱՔՍԵԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

նախակրթարանի կրտսեր խումբ

2022--2023ուստարի

Կրտսեր խմբի դաստիարակ՝

Բարսեղյան Աշխեն

<<Հաստատում եմ >>

տնօրեն Ս.Խաչատրյան

Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի 2022 թվականի

օգոստոսի 5-ի N 14-Լ հրամանի

«Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի 2021 թվականի

դեկտեմբերի 16-ի N 56-Լ հրամանի

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ

(4-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ)

Ծրագիրը հասցեագրված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժներին: Ծրագրի նպատակն է աջակցել 4-5 տարեկան սաների՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով նախատեսված կարողունակությունների ձևավորման, առօրյայի կազմակերպման, ընդհանուր զարգացման, դաստիարակության խնդիրների իրականացման, առարկայական միջավայրի ստեղծման, սանի գործունեության տարբեր ձևերի կազմակերպման աշխատանքներին:

ԵՐԵՎԱՆ 2021

Միջին խմբի 4-5 տարեկանների կրթական հիմնական ծրագիրը կազմված է ՀՀ Կառավարության կողմից հաստատված նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջների հիման վրա (13.05.2021 թ N744-Ն որոշում)՝ այդ տարիքի սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ծրագրի բովանդակության յուրացումը կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների կողմից իրականացվում է նրանց համար կազմված ԱՈՒԶՊ-ով (անհատական ուսուցման և զարգացման պլան):

4-5 տարեկան սաների կրթական համալիր ծրագիրը ներառում է Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված զարգացման հետևյալ հիմնական բնագավառները (ուղղությունները)՝

1) Խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.

4-5 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի խոսքի զարգացման և լեզվամտածողության, տրամաբանության, ստեղծագործական երևակայության, ճանաչողական հետաքրքրությունների զարգացման աշխատանքները՝ պարապմունքների, սանի խաղային գործունեության և առօրյայի կազմակերպման ընթացքում:

2) Հուզակամային և սոցիալ-անձնային զարգացում.

4-5 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի հասակակիցների և մեծահասակների հետ շփումը, անձնային որակների, սոցիալական վարքագծի ձևավորմանը նպաստող գործունեության ձևերը:

3) Շարժողական և ֆիզիկական զարգացում.

4-5 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի շարժողական ակտիվությունը ապահովող գործունեության ձևերը. մանր և խոշոր մկանները զարգացնող խաղերը, զբոսանքները, ֆիզկուլտուրային միջոցառումները, կոփման արարողությունները:

4) Աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

4-5 տարեկանների համար այս բնագավառը ներառում է շրջակա միջավայրի հետ ծանոթացումը, առարկայական միջավայրում կողմնորոշումը, ստեղծագործականության, հնարամտության, ինքնուրույնության, ինքնասպասակման և անվտանգ կենսակերպի տարրական հմտությունների զարգացումը գործունեության տարբեր ձևերում և առօրյայում:

5) Բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական, սեռային ինքնագիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ.

4-5 տարեկանների համար այս բնագավառը ներառում է գեղագիտական,

բնապահպանական, սեռային ինքնագիտակցման, սեփական և ազգային ինքնությունը արժևորելու, բարոյական դաստիարակության տարբեր ապահովող գործունեության ձևերը:

Հաշվի է առնվել սաների երեխայակենտրոն ուսուցման ու դաստիարակության, շարունակական կրթության ապահովման պահանջը:

Ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխատանքային, տնտեսագիտական, իրավական, էկոլոգիական, սեռային, գեղարվեստագեղագիտական դաստիարակության խնդիրները բխումեն հասակարակության զարգացման պահանջներից: Դրանք համակցված իրագործվում են ծրագրային առանձին բաղադրիչներում և իրականացնում են նախադպրոցական կրթության վերակառուցման ու նորացման գործընթացը՝ ոլորտային վերջնարդյունքների ապահովման և կարողունակությունների ձևավորման միջոցով:

Ծրագիրը սահմանում է տվյալ տարիքային խմբի (4-5 տարեկանների) ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության կառուցվածքը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղությունները ներառող շաբաթական պարապմունքների քանակը,կանոնակարգային պահերը, շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, տարեվերջին սաներից ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ զարգացման ոլորտների ու գործունեության ձևերի:

Ըստ ծրագրի կրթության բովանդակությունը ապահովում է 4-5 տարեկան սաների գիտելիքների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորումը՝ յուրաքանչյուր սանի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հաշվառմամբ:

4-5 տարեկանների կրթական հիմնական ծրագրին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին.
- կրթության աշխարհիկ բնույթը,
- սաների և մեծահասակների փոխգործունեության երեխայակենտրոն մոտեցման ապահովումը,
- ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը,
- նախադպրոցական կրթության բովանդակության մեջ սանի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, էկոլոգիական նախագիտելիքներին ծանոթացման ներառումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ծրագրում ներկայացված են դաստիարակության և ուսուցման նպատակները, խնդիրները ըստ ծրագրային բաղադրիչների, սաների առօրյայի կազմակերպման առանձնահատկությունները, վերջնարդյունքների ապահովման հիմքերը, սաների

հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ծրագրի նպատակն է՝

- ✓ 4-5 տարեկան սաների տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխան ներդաշնակ հոգեկան ու ֆիզիկական զարգացման ապահովումը՝ ըստ ոլորտներով սահմանված վերջնարդյունքների:
- ✓ Նախադպրոցական կրթության ավարտին երեխաներից ակնկալվող կարողունակությունների ձևավորումը (գիտելիքներ, հմտություններ, համապատասխան վերաբերմունք և վարքագիծ):
- ✓ Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին աջակցումը:

Միջին խմբի 4-5 տարեկանների կրթական հիմանական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, յուրաքանչյուր երեխայի համար՝ սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Կրթական ծրագրի բովանդակությունը ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ (Հապավումը՝ Շ).
2) խոսքի և հաղորդակցական ոլորտ (Հապավումը՝ ԽՀ).
3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ (Հապավումը՝ ՀՍԱ).
4) իմացական ոլորտ (Հապավումը՝ Ի).
5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ (Հապավումը՝ ԻԱԱ) :

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված ինը կարողունակությունների ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ միջին խմբում սաների հետ օրվա կանոնակարգային պահերին կազմակերպվող աշխատանքն արտացոլվում է 6 ծրագրային բաղադրիչներում՝

1. Խոսքի զարգացում
2. Ֆիզկուլտուրա
3. Ինձ շրջապատող աշխարհը
4. Մաթեմատիկական տարրական պատկերացումներ
5. Երաժշտություն
6. Կերպարվեստ և կառուցողական աշխատանք:

Ծրագրային այս բաղադրիչների զատումը պայմանական է, դրանք սերտորեն փոխկապակցված են: Սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում, եթե բոլոր բաղադրիչներով միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում:

Ծրագրային բոլոր բաղադրիչներով սահմանված վերջնարդյունքներն ուղղված են առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը՝

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն,

2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն
3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5) թվային և մեդիա կարողունակություն

6) մշակութային կարողունակություն
7) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն
8) տնտեսական կարողունակություն
9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ (4-5 ՏԱՐԵԿԱՆ)

Շարժողական ոլորտ

ա. սանը կարողանում է ճիշտ կատարել և զուգակցել հիմնական շարժողական գործողությունները,

բ. խաղում է շարժախաղեր՝ հիմնական շարժողական գործողություններով, մասնակցումէ մարզախաղերի տարրերով փոխանցումավազքերին՝ դրսևորելով անհրաժեշտ շարժողական ակտիվություն,

գ. տիրապետում է սպորտային վարժություններին՝ սահում է սահնակով և դահուկներով, վարում է ինքնագնաց, եռանիվ և երկանիվ հեծանիվ,

դ. ջրում կատարում է ոտքերի և ձեռքերի շարժումներ, խաղում է ջրային խաղեր,

ե. կատարում է կեցվածքի շեղման, հարթաթաթությունը կանխարգելող վարժություններ,զ. կատարում է ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանց առարկաների և առարկաներով, վերին ու ստորին վերջույթների, ուսագոտու, իրանի և որովայնի համար, է. կատարում է պարզ պարային շարժումներ և դրանց զուգակցումներ,

ը. ինքնուրույն կատարում է տարբեր բնույթի ֆիզիկական վարժություններ՝ առանց առարկաների և առարկաներով,

թ. ֆիզիկական դաստիարակության տարբեր ձևերում դրսևորում է կարգապահություն, ակտիվություն, ընկերասիրություն, համագործակցություն, բարեկիրթ վարքագիծ և հարգանք,

ժ. գիտի ամառային և ձմեռային մարզաձևեր, ճանաչում է հայ անվանի մազիկներին.

Խոսքի և հաղորդակցության ոլորտ

ա. սանն ընկալում և վերարտադրում է լսած փոքրիկ պատմությունները,

բ. նկարագրում է առարկաները, երևույթները, դրանց միջև եղած պարզագույն կապերը. ակտիվ խոսքում կիրառում այնպիսի բառեր, որոնք արտահայտող առարկաներն ու երևույթները երեխայի անձնական փորձում չեն եղել,

գ. նկարների օգնությամբ կազմում է փոքրիկ պատմություններ, ամբողջացնում կիսատ թողնված միտքը,

դ. պատմում է սեփական փորձառության մասին,

ե. խոսքն արտահայտում է տարբեր արտահայտչամիջոցներով՝ փոխելով ձայնի ուժգնությունը, տեմպը, օգտվում է խոսքային դադարներից,

զ. քերականորեն ճիշտ է կազմում նախադասությունները՝ կիրառելով կապական միջոցներ,

է. դրսևորում է հետաքրքրություն գրքերի նկատմամբ, արտահայտում գրական

ստեղծագործություն լսելու ցանկություն,

ը. հաղորդակցման ընթացքում ոչ միայն արտահայտում է սեփական վերաբերմունքըորևէ երևույթի նկատմամբ, այլև դրսևորում է դիմացինին լսելու կարողություն,

թ. տարբերում է հաղորդակցության անմիջական և միջնորդավորված ձևերը, պատկերացնում է տեխնոլոգիաների դերը հաղորդակցության մեջ.

Իմացական ոլորտ

ա. սանը ցուցաբերում է հաշվի, թվերի, քանակի իմացություն, թվաբանական պարզ խնդիրներ լուծելու կարողություն,

բ. մասնակցում է համատեղ կազմակերպվող աշխատանքներին և ավարտին հասցնում առաջադրանքը,

գ. հասակակիցների հետ համատեղ գործունեության ընթացքում դրսևորում է իմացական ակտիվություն, երևակայություն, կարծիք հայտնելու կարողություն,

դ. ճանաչում է աշխարհը փորձարկումների, ինքնուրույն գործողությունների միջոցով, խմբավորում առարկաները, պատկերներն ըստ ընդհանուր հատկանիշների,

ե. հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունը և փոխկապվածությունը, ունի տարրական պատկերացումներ կենդանական աշխարհին անկենդան բնության մասին, կարևորում է մարդու աշխատանքը, դրա արդյունքները, զ. ճանաչում է փոխադրամիջոցները, գիտի դրանց դերը մարդու կյանքում,

է. ունի տարրական պատկերացումներ ազգերի մշակութային առանձնահատկությունների մասին,

ը. մեծահասակների օգնությամբ կողմնորոշվում է տեղեկատվության բազմազանության մեջ և կատարում նպատակամետ ընտրություն.

Հուզական, սոցիալ-անձնային ոլորտ

ա. սանը տարբերակում է շրջապատող մարդկանց հուզական վիճակն ու զգացմունքները, համադրում է իր և մյուսների ցանկությունները,

բ. հասակակիցների և մեծահասակների հետ հարաբերություններում դրսևորում է ընդգծված վերաբերմունք, ընկալում է մարդկանց տրամադրվածությունն իր նկատմամբ, փորձում է դրսևորել հանդուրժողականություն, օգնության ձեռք մեկնելու, ապրումակցելու կարողություններ,

գ. մեծահասակների հետ շփվելիս պահպանում է բարեվարքության նորմերը, հասակակիցների հետ հաղորդակցվելիս դրսևորում է համատեղ գործելու պատրաստակամություն,

դ. խմբային աշխատանքներում և խաղերում դրսևորում է համատեղ գործելու պատրաստակամություն, համագործակցելու ցանկություն, ակտիվ մասնակցում է մեծահասակների և հասակակիցների նախաձեռնություններին,

ե. հասակակիցների հետ համատեղ գործունեության ընթացքում դրսևորում է ընդհանուր նպատակին միտված անձնային հատկություններ և սոցիալական կարողություններ՝ իր և ընկերների ցանկություններն ու գործողությունները համադրելու կարողություն,

սեփական վարքը կարգավորելու փորձեր, համբերատարություն, ընկերոջը հասկանալուն աջակցելու պատրաստակամություն,

զ. ուսումնասիրում է իր անձի, ընտանիքի անդամների, շրջապատող մարդկանց առանձնահատկությունները, ցուցաբերում է հստակ վերաբերմունք ընտանիքում կամ մանկապարտեզում կատարվող իրադարձություններին,

է. դրսևորում է սեփական հույզերի ու գործողությունների, մտքերի և վերաբերմունքի մասին խոսելու պատրաստակամություն.

Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ

ա. սանը դրսևորում է անձնական հիգիենայի կանոնների պահպանման կարողություններ և ինքնասպասարկման հմտություններ,

բ. պահպանում է օրվա ռեժիմը և հիգիենայի հիմնական պահանջները,

գ. գիտի առողջության պահպանման հիմնական կանոնները, տարբերակում է առողջ և անառողջ սնունդը, պատկերացնում է օգտակար և վնասակար սովորությունների հետևանքները, դրսևորում է բացասական վերաբերմունք վնասակար սովորությունների հանդեպ,

դ. կարողանում է նկարագրել իր և մյուսների առողջական վիճակը, բացատրել հիվանդության հիմնական ախտանիշներն ու հնարավոր պատճառները,

ե. հասկանում է սեփական անձի, վարքի և կենսագործունեության անվտանգության հիմնական կանոնները և հաճախ առանց հիշեցման հետևում է դրանց,

զ. ծանոթ է անվտանգության կանոններին տանը, մանկապարտեզում, փողոցում, այլ վայրերում և մեծահասակի հիշեցումով հետևում է դրանց,

է. ծանոթ է երթևեկության հիմնական կանոններին և մեծահասակի հիշեցումով հետևում է դրանց,

ը. ունի տարրական գիտելիքներ ֆիզիկական ակտիվության և մարմնի կոփման կարևորության մասի

ՍԱՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կանոնակարգը օրվա ընթացքում սաների տարաբնույթ գործունեության տեսակների՝ պարապմունքների, դաստիարակչական աշխատանքների ու գործունեության ազատ ձևերի կազմակերպման, սաների ֆիզիկական, մտավոր աշխատանքների, հանգստի ճիշտ հերթագայման և ծանրաբեռնվածության ներդաշնակ բաշխման նախագծումնէ: Կանոնակարգի ճիշտ կառուցվածքի հիմնական սկզբունքը դրա համապատասխանությունն է սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին՝ չբացառելով նաև անհատական մոտեցման սկզբունքը (քնի տևողություն, գործունեության տեմպ, նախասիրություններ, և այլն):Օրվա կանոնակարգը սաների կյանքի կազմակերպման, համակողմանի զարգացման, առողջության ամրապնդման և դաստիարակության կարևոր պայման է:

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ (4-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ) ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(9 ժամյա, հնգօրյա աշխատանքային շաբաթով)

N	Կանոնակարգային պահեր	Ժամերը տարվա ցուրտ եղանակին	Ժամերը տարվա տաք եղանակին
1.	Սաների ընդունելություն, խաղեր առավոտյան մարմնամարզություն	8.30 -9.30	8.30 -9.30
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	9.30- 10.00	9.30 - 10.00
3.	Պարապմունքի նախապատրաստում Պարապմունք առաջին Պարապմունք երկրորդ Պարապմունք երրորդ	10.00 -10.10 10.10 - 10.35 10.45 -11.10 11.20 - 11.45	10.00 -10.10 10.10 -10.35
4.	Խաղեր, զբոսանքի նախապատրաստում, զբոսանք (խաղեր, դիտումներ, աշխատանք)	11.45 -12.30	10.35 -12.30 /կոփիչ միջոցառումներ /
5.	Վերադարձ զբոսանքից, խաղեր	12.30 - 12.45	12.30 -12.45
6.	Ճաշի նախապատրաստում ,ճաշ	12.45 - 13.15	12.45 - 13.15
7.	Ազատ գործունեություն	13.15 -13.25	13.15 -13.25
8.	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	13.25 -15.15	13.25 -15.15
9.	Աստիճանական արթնացում, ազատ խաղեր	15.15 -15.50	15.15 -15.50
10.	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ	15.50 -16.10	15.50 -16.10

11.	Զբոսանքի նախապատրաստում զբոսանք,խաղեր,տուն ճանապարհել	16.10 -17.30	16.10 -17.30

Յուրաքանչյուր նախադպրոցական ուսումնական հաստատություն կազմում է իր պայմաններին, առանձնահատկություններին համապատասխան կանոնակարգ: Պարապմունքների բաշխման ցանկի կազմման ժամանակ անհաժեշտ է պահպանել սաների ֆիզիկական և մտավոր աշխատանքների ճիշտ հերթագայումը, ծանրաբեռնվածության ներդաշնակ բաշխումը:

Ցանկալի է կանոնակարգային պահերի մեծ մասը կազմակերպել բակում:

ՄԻՋԻՆ ԽՄԲԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑԱՆԿ

N	Պարապմունքների տեսակները	Պարապմունքների քանակը
1.	Խոսքի զարգացում	2 պարապմունք
2.	Ինձ շրջապատող աշխարհը	2 պարապմունք
3.	Մաթեմատիկական տարրական պատկերացումներ	1 պարապմունք
4.	Նկարչություն	2 պարապմունք
5.	Ծեփակերտում	1 պարապմունք
6.	Կառուցողական աշխատանք, ապլիկացիա	0,5 պարապմունք 0,5 պարապմունք
7.	Ֆիզկուլտուրա	2 պարապմունք
8.	Երաժշտություն	2 պարապմունք
9.	Շաբաթական ընդամենը	13 պարապմունք

Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և ավարտվում է օգոստոսի 31-ին: Պարապմունքներն անցկացվում են սեպտեմբերի 15-ից մինչև մայիսի 31-ը՝ 20-25 րոպե տևողությամբ: Սեպտեմբերի առաջին երկու շաբաթը հարմարման փուլ է, ուստի հատուկ պարապմունքներ չեն անցկացվում: Պարապմունքների միջև ընկած ժամանակահատվածը 10 րոպե է:

Ծրագրային նյութի յուրացման համար հաշվետու ժամանակահատված է սահմանվում յուրաքանչյուր եռամսյակը:

Չորրորդ եռամսյակի համար նախատեսված չէ պարապմունքների բաշխման ցանկ, քանի որ պարապմունքներն անցկացվում են միայն ուսուցանված նյութի կրկնության ու ամրապնդման նպատակով:

Ամռան ամիսներին անցկացվում են կոփիչ միջոցառումներ:

Բաց թողնված ծրագրային ծավալը կարող է լրացվել չորրորդ եռամսյակում:

Միջին խմբում կազմակերպվող պարապմունքների քանակը՝ ըստ ամիսների և տարվա կտրվածքով

Պարապմունքների տեսակները	Ըստ ամիսների	Տարվա կտրվածքով

1. Խոսքի զարգացում	4	36
2. Ինձ շրջապատող աշխարհը	4	36
3. Մաթեմատիկական տարրական պատկերացումներ	8	72
4. Նկարչություն	8	72
5.Ապլիկացիա, կառուցողական աշխատանք	4	36
6. Ծեփակերտում	4	36
7 .Ֆիզկուլտուրա	8	72
8. Երաժշտություն	8	72

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Միջին տարիքային խմբի (4-5 տարեկանների) խոսքի զարգացման ծրագրային բաղադրիչի նպատակներն են՝

- ✓ կատարելագործել սաների խոսքի հնչյունային կուլտուրան, հասնել բառերի ու հնչյունների մաքուր արտաբերմանը, ընդարձակել ակտիվ բառապաշարը:
- ✓ սովորեցնել խոսքը կառուցել քերականորեն ճիշտ,
- ✓ զարգացնել կապակցված ինքնուրույն խոսքը, երկխոսելու և մենախոսելու ունակությունը,
- ✓ դաստիարակել հուզական արձագանք և հետաքրքրություն գրական ստեղծագործությունների նկատմամբ:

Միջին խմբում այս ծրագրային բաղադրիչում խոսքը որոշարկված է խոսքի զարգացման օրինակելի չափանիշների՝ լեզվի հնչյունային համակարգի բարելավման, բառապաշարի հարստացման և ակտիվացման ձևավորման, քերականական կառուցվածքի յուրացման, կապակցված խոսքի զարգացման աշխատանքների հաջորդականությունը:

Խոսքի զարգացման պարապմունքներին, առօրյայում, գործունեության տարբեր ձևերում՝ շրջապատող միջավայրի, բնության հետ ծանոթացման, ինչպես նաև գեղարվեստական գրականության ստեղծագործությունների ընթերցումների ընթացքում դաստիարակը սաների գիտակցությանն է հասցնում այն գաղափարը, որ առարկաները և երևույթները արտահայտվումեն բառերի միջոցով և ունեն որոշակի նշանակություն: Իսկ մտքի առավել ճշգրիտ արտահայտման համար անհրաժեշտ է ընտրել իմաստով համապատասխան բառեր:

Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են՝

- Նպաստել խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակմանը,
- Հարստացնել ու ակտիվացնել բառապաշարը,
- Նպաստել խոսքի քերականական կառուցվածքի ձևավորմանը,
- Զարգացնել կապակցված խոսքը,

• Ծանոթացնել գեղարվեստական գրականությանը:

Այս բաղադրիչում ներառված է նաև «Զարգացնող խոսքային միջավայր» բաժինը, որի հիմնական նպատակն է՝ որոշել խոսքային զարգացնող միջավայրի կազմակերպման առանձնահատկությունները, կատարելագործել երեխաների հաղորդակցումը

նախադպրոցական ուսումնական հաստատությունում և դրանից դուրս մեծահասակների, հասակակիցների, կրտսեր և ավագ խմբերի երեխաների հետ:

Բառապաշարի հարստացում և ակտիվացում՝

- ակտիվացնել բառապաշարը՝ հատկանիշ և գործողություն ցույց տվող բառերով՝ խորացնելով շրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների մասին գիտելիքներըև պատկերացումները,
- շարունակել սովորեցնել օգտագործել ընդհանրացնող բառեր:

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքներն այս տարիքային խմբում իրենց մեջ ներառում են՝

- ճիշտ հնչարտաբերման ձևավորում,
- հնչյունային լսողության զարգացում,
- ձայնային ապարատի, խոսքային շնչառության զարգացում,
- խոսքային արտահայտչամիջոցներից և խոսքի առոգանությունից ճիշտ օգտվելու ունակությունների զարգացում:

Անհրաժեշտ է՝

- Ամրապնդել ձայնավոր և բաղաձայն հնչյունների ճիշտ արտաբերումը և մշակել շփական, պայթական, հնչյունների արտասանությունը և զարգացնել հնչարտասանական ապարատը,
- ծանոթացնել լեզվական այն իրողությանը, որ բառերը կազմված են հնչյուններից,
- տարբերել և անվանել որոշակի հնչյունով սկսվող բառերը,
- արտասանել բառի առաջին հնչյունը, ասել բառեր տրված հնչյունով,
- ծանոթացնել «բառ», «հնչյուն» եզրույթներին,
- շարունակել աշխատանքը առոգանության ուղղությամբ,
- կատարելագործել բառերի և բառակապակցությունների հստակ արտաբերումը, զարգացնել արտահայտիչ խոսքը:
- սովորեցնել ճիշտ արտասանել բառերը:

Խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում

- Ստեղծել պայմաններ քերականորեն ճիշտ խոսք կառուցելու համար:
- Խրախուսել 5 տարեկանին բնորոշ բառաստեղծման երևույթը:
- Օգնել սաներին՝ համաձայնեցնել բառերը նախադասությունների մեջ թվով, դեմքով, ժամանակով:
- Ամրապնդել գոյականի եզակի թիվը հոգնակիի վերածելու, հոլովներից ճիշտ օգտվելու, բայերի ճիշտ կիրառելու կարողությունը:
- Սովորեցնել խոսքի մեջ ակտիվորեն օգտվել բարդ ստորադասական և բարդ համա-

դասական նախադասություններից:

Կապակցված խոսքի զարգացում

- Զարգացնել երկխոսություն վարելու կարողությունը, զրույցներին ակտիվորեն մասնակցելու կարողությունը,

- սովորեցնել պատասխանել հարցերին և ինքնուրույն հարցեր տալ,
- սովորեցնել նկարագրել առարկան,
- զարգացնել նկարի շուրջ պատմումներ կազմելու կարողություն,
- սովորեցնել բեմականացնել փոքրիկ հեքիաթներ կամ հեքիաթից որևէ հատված,
- սովորեցնել վերապատմել պարապմունքների ժամանակ ընթերցված կամ արդեն ծանոթ փոքրիկ հեքիաթներ և պատմվածքներ:

Ծանոթացում մանկական գեղարվեստական գրականությանը

Գեղարվեստական գրականության ծանոթացումը մեծ ազդեցություն ունի մտածողության, խոսքի զարգացման և արտաքին աշխարհի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման վրա: Անհրաժեշտ է սաների համար ամեն օր կարդալ՝ ինչպես նոր, այնպես էլ՝ նրանց արդեն ծանոթ ստեղծագործություններ:

- Արթնացնել սեր և հետաքրքրություն գեղարվեստական գրականության տարբեր ժանրերի հանդեպ/ հեքիաթ, պատմվածք, առակ, ոտանավոր/՝ ծանոթացնելով գրողների, բանաստեղծների, հայ մանկագիրների, ինչպես նաև ժողովրդական ստեղծագործություններին,
- զարգացնել գրական ստեղծագործությունների իմաստն ըմբռնելու, դրանց բովանդակությունը հուզականորեն արտահայտելու կարողությունը,
- սովորեցնել արտահայտիչ, հուզականորեն արտասանել ոտանավորը, օգտվել տրամաբանական դադարներից, շեշտադրումներից և այլն,
- զարգացնել գեղարվեստախոսքային գործունեությունը, ձևավորել կատարողական ընդունակություններ, յուրաքանչյուր կերպարին բնորոշ արտահայտչամիջոցներից օգտվելու կարողություն:

Սաների խոսքի զարգացման պարապմունքների կազմակերպման համար, ինչպես նաև առօրյա գործունեության ընթացքում առաջարկվում է գրական ստեղծագործությունների հետևյալ ցանկը: Դաստիարակն իր հայեցողությամբ կարող է ընտրել և համարժեք ստեղծագործություններով լրացնել տվյալ ցանկը:

Պատմելու և ընթերցելու համար «Ամպն ու սարը»/ Հ. Թումանյան/, «Փիսիկների գնդակը» / Ռ.Ղարիբյան/, «Նունիկի փիսիկը»/ Լ.Պողոսյան/ ,«Ով աշխատի, նա կուտի» / ռուսական հեքիաթ/, «Այոն ու ոչը»/ Հ.Հայրապետյան/**,** «Ծիտիկի երգը»/ Լ. Թարգյուլ/, «Բարի գայլուկը» /Ա. Մովսիսյան/, «Խորամանկ կատուն և դյուրահավատ մկնիկը» /Ա. Մովսիսյան/, «Ընկերը»/ Ա. Մովսիսյան/,«Ծիտը»/ Հովհ. Թումանյան/,«Մե՞ծ եմ, թե՞ փոքր»/ Ս. Մուրադյան/, «Աշուն քեռին» / Գ.Մովսիսյան/, «Տոնածառն անտառում» /Ա. Մովսիսյան/, «Աղվեսն ու հավերը»/

Վ.Այգեկցի/, «Թե ինչպես Զմեռ պապիկը հալվեց»/ Ս. Մուրադյան/, «Մեր բանակը» /Ա. Մովսիսյան/, «Չորս ցանկություն»/Կ.Ուշինսկի/, «Եղանակ քույրերը»/Ս Մարշակ/, «Բարեսիրտ շունը»/ Ավ. Իսահակյան/,«Լավ ընկերը» /Ա.Մովսիսյան/, «Աղջիկն ու սունկերը» /Լ.Տոլստոյ, «Ծաղիկների թագուհին» /Ա. Մովսիսյան/, «Ծիածանի ծնունդը» /Ա. Մովսիսյան/, «Զատիկ»/ հայկական ժող. տոն/, «Գառնիկ ախպերը»/ Հովհ. Թումանյան/, «Ճանապարհորդ Ջեկոն»/

Ստ.Զորյան/, «Ագռավն ու աղվեսը» /Վ.Այգեկցի/, «Երեք արջի հեքիաթը»/ Լև Տոլստոյ/, «Սուտլիկ որսկանը» /Հովհ. Թումանյան/, «Կենդանիների վեճը» /Ղ. Աղայան/, «Վատ ընկերը»/Խ.Աբովյան/, «Գիշերն անտառում»/Սիմակ/, «Մանուշակը» /Գ.Մովսիսյան/, «Աղջիկն ու ծաղիկները»/ Ա. Մովսիսյան/, «Հայր մեր», «Աղոթք երեխաների», «Լորիկներ» /Վ.Անանյան/ «Խաղալիքների ժողովը» , «Ինչու տխրեցին» /Լ. Պողոսյան /:

Արտահայտիչ արտասանություն «Սագիկ»/Ղ. Աղայան/, «Բկլիկ ձկնիկ»/Ա. Խնկոյան/, «Այս բոլորին»/Հ. Հայրապետյան/, «Բադիկ» /Ռ.Պատկանյան/,«Ընկերասերը»/ Ս. Մուրադյան/, «Իմ գնդակը»/Ս.Մուրադյան/, «Իմ շնիկը» /Ավ. Ճողորյան/, «Գնացքը»/ Ս. Կապուտիկյան/, «Մուկն ու կատուն» /Ս.Կապուտիկյան/, «Կատու» /Հ. Աղաբաբ/ «Երևանը»/Ն. Հովնաթան/, «Աշնան երգ»/Հ.Հայրապետյան/,«Աշուն» /Հ.Հայրապետյան/, «Ձմեռ պապի» /Աթ. Խնկոյան/, «Ձյունը» /Հ. Հայրապետյան/, «Սահմանապահ եղբայրս» /Ս.Մուրադյան/,«Գրադարանում»/ Ս.Կապուտիկյան/, «Հացթուխը»/ Ս.Մուրադյան/,«Շինարար Լևիկը» /Ս.Կապուտիկյան/, «Ժամացույցը» /Ս.Կապուտիկյան/,«Ամիսներ և չորս եղանակ» /Ղ.Աղայան/, «Ոսկե ձվիկը»/ ռուսական հեքիաթ/,«Գրիչը»/ Հովհ. Թումանյան/,«Հայոց լեզու» /Ռ. Ղարիբյան/,«Վագրն ու կատուն»/Պ.Սևակ/,«Որ մեծանամ» /Ս.Կապուտիկյան/,«Կարծում եք, թե կատա՞կ է»/Ս.Կապուտիկյան/,«Ինձ լավ լսիր,ա՛յ տիկնիկ»/ Ս.Կապուտիկյան/ «Համբարձման տոն»/Հովհ.Թումանյան/,Վարդավառ» /Ն.Միքայելյան/«Արտուտիկ»/ Հովհ.Թումանյան/, «Մանուշակ» /Ղ.Աղայան/,«Մեղու»/ Ներսես Շնորհալի/, «Անհաշտ ծաղիկներ» /Հոբոս- Ապեր/, «Ծաղիկներ»/Հովհ. Թումանյան/, «Ծիծեռնակ» / Աթ. Խնկոյան/ «Ձնծաղիկ»/ Ն.Հովնաթան/, «Մայիս»/Հ.Հայրպետյան/, «Ձնծաղիկ»/Հ.Հայրապետյան/ «Մայր ճնճղուկը» «Նկարիչ արջը», «Շլդիկ, մլդիկ նապաստակ», «Հյուրասեր Նունիկը», «Ու՞ր է գնում Նելլին փոքրիկ»/Լ. Պողոսյան, «Մանուկներն ու սագը»/ Հովհ. Շիրազ/, Պարտեզ»/ Ս.Կապուտիկյան/,«Կատու» /Ս.Կապուտիկյան/, «Մայիս» «Գարուն», «Մեծամիտ Աքլորը»/ Վ. Վարդանյան/:

Վերապատմում՝ «Թե ինչու կատուն միայն նախաճաշից հետո է լվացվում» /լիտվական ժող. հեքիաթ/,«Ուլիկը» /Հովհ. Թումանյան/ «Նապաստակը առյուծի պալատում» /Ս.Մուրադյան/,«Նապաստակն ու բադը» /Ս.Մուրադյան/, «Գայլն ու կոշկակար նապաստակը» /Ս.Մուրադյան, «Գայլն ու աղվեսը»/ Ս.Մուրադյան,«Գառնիկ ախպերը»/ Հովհ. Թումանյան/,«Շունն ու կատուն»/ Հովհ. Թումանյան/,«Ճանապարհորդ Ջեկոն»/ Ստ.Զորյան,«Ով աշխատի, նա կուտի»/ ռուսական ժող. հեքիաթ/, «Լեզուն կտրած ծիտիկը»/Հովհ. Թումանյան:

Ստեղծագործական պատմումներ՝ «Իմ սիրելի խաղը», «Աշուն», «Իմ հայրենիքը Հայաստանն է», «Ձմեռ»,«Նոր տարի», «Հայոց բանակը, «Գարուն է», «Մայրիկների տոնը», «Կենդանաբանական այգում», «Թանգարանում»:

Վերջնարդյունքներ (Հապավում՝ ԽՁ)

1. առանձնացնի հնչյունները բառի մեջ,
2. վանկատի երկվանկ կամ եռավանկ բառեր,
3. կիրառի հականիշ և հոմանիշ բառեր
4. նկարագրի առարկաներ՝ օգտագործելով ածականներ,
5. համեմատի առարկաներն՝ օգտագործելով ածականի համեմատության աստիճանները,
6. ձևակերպի և կիրառի իրավիճակային հարցեր հասակակիցների և մեծահասակների հետ հաղորդակցվելիս,
7. ավարտի նախադասության միտքը,
8. կազմի բարդ նախադասություններ՝ կիրառելով համադասական և ստորադասական շաղկապներ,
9. պատմի նկարի բովանդակությունը,
10. վերապատմի լսած պատմությունը և հեքիաթը՝ պահպանելով մայրենի լեզվի հնչյունների ճիշտ արտասանությունը և խոսքի քերականական կողմը,
11. բեմականացնի ծանոթ հեքիաթից որևէ հատված,
12. պատմի անհավանական պատմություններ, որոնք կարող են լինել վառ երևակայության զարգացման արդյունք,
13. պատմի սեփական փորձից,
14. արտասանի բանաստեղծություններ, քառյակներ, հանելուկներ՝ համապատասխան առոգանությամբ
15. նկարագրի առարկաներ, երևույթներ, իրադարձություններ
16. ակտիվ մասնակցի իրեն հետաքրքրող խոսակցությանը,
17. վերահսկի սեփական խոսքի արտահայտչականությունը՝ անհրաժեշտության դեպքում փոխելով ձայնի ինտոնացիան,
18. բացատրի իր յուրաքանչյուր գործունեությունը /խաղային, կենցաղային և այլն/,
19. ձևակերպի իր կարիքները,
20. արտահայտի որոշակի գրական ստեղծագործություն լսելու ցանկություն,
21. հետաքրքրությամբ դիտի մանկական նկարազարդ գրքեր,
22. անվանի սիրելի հեքիաթը,
23. արտահայտի մտքեր, զգացողություններ, զգացմունքներ, ցանկություններ տարբեր երևույթների մասին՝ հիմնավորելով դրանք,
24. գիտակցի պատճառահետևանքային կապերը՝ համեմատելով ունկնդրած ստեղծագործության հերոսների արարքները,
25. ունենա պատկերացում տպագիր գրավոր խոսքի մասին,
26. բռնի գիրքը ճիշտ դիրքով,
27. ձևացնի, թե կարդում է՝մատը տողերի վրայով սահեցնելով,
28. կազմի համատեղ պլաններ հասակակիցների հետ,
29. փորձի իր առջև ծառացած խնդիրներ լուծել,
30. կիրառի պարզագույն մեդիագործիքներ ըստ անհրաժեշտության,
31. կատարի էլեկտրոնային խաղ- վարժություններ,
32. օգտագործի ոչ խոսքային հաղորդակցության միջոցներ,
33. մասնակցի 20-25 ր տևողությամբ տարբեր աշխատանքներին,
34. մասնակցի խաղերին, քննարկի խաղի հետ կապված հարցեր,
35. ենթարկվի նախապես քննարկված կանոններին, հետևի վարքի կանոններին,
36. կատարի մի քանի քայլից բաղկացած հանձնարարություններ,

37. խոսքի միջոցով լուծի կոնֆլիկները,
38. ներգրավվի նոր գործողության մեջ:

Բովանդակություն

Հեքիաթ, պատմվածք, հանելուկ, շուտասելուկ, սուտասելուկ, ոտանավոր, առակ, ասացվածք:

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային:Խաղեր.

- Պարապմունքներ՝ (դիդակտիկ խաղ, զրույց,ոտանավորի *ուսուցում և ամրապնդում, վերապատմում, պատմում* /նկարով, խաղալիքների նկարագրություն, դաստիարակի ցուցումով, անավարտ պատմության շարունակություն, հիշողությամբ, ստեղծագործական/ գեղարվեստական գրականության ունկնդրում).
- Մշակութային այցեր.
  - էքսկուրսիա, զբոսանք.
  - Տոներ, միջոցառումներ.
  - Բեմականացում, թատրոն. Ինքնուրույն գործունեություն.
  - Աշխատանք կենտրոններում.
  - Աշխատանք բնության անկյունում, պարտեզում, հերթապահություն.

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝
Շ - (թ) , ԽՀ - (ը), (թ) Ի -(բ), (գ), (դ), (ե), (զ), (է) ՀՍԱ -(ա), (բ), (գ), (դ,) (ե), (զ), (է),
ԻԱԱ -(ա), (բ), (գ), (ե), (զ), (է)

ԻՆՁ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱՇԽԱՐՀԸ

Ծրագրի «Ինձ շրջապատող աշխարհը» ծրագրային բաղադրիչի հիմնական նպատակներն են՝

- նպաստել իմացական կարողությունների, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը,
- զարգացնել հաղորդակցական հմտությունները:
- ձևավորել պատկերացումներ սեփական անձի, շրջակա միջավայրի կենդանական և անկենդան աշխարհի, բնության երևույթների մասին,
- ձևավորել շրջակա միջավայրի, բնության և կենդանական աշխարհի նկատմամբ հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք և համապատասխան վարքագիծ:

Ծրագրային այս բաղադրիչը հնարավորություն է տալիս լուծելու մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիարակության մի շարք խնդիրներ:

«Ինձ շրջապատող աշխարհը» ծրագրային բաղադրիչի խնդիրներն են՝

- ✓ ընդլայնել իմացական հետաքրքրությունները շրջապատող աշխարհի մասին,
- ✓ ընդլայնել պատկերացումներն իր անձի, ընտանիքի, մանկապարտեզի, փողոցի, հայրենիքի, քաղաքի, գյուղի մասին,
- ✓ ընդլայնել պատկերացումներն ազգային տոների, ծեսերի մասին,
- ✓ ընդլայնել պատկերացումները երթևեկության պարզ նշանների, կանոնների, տրանսպորտի տեսակների մասին,
- ✓ շարունակել ձևավորել անվտանգ վարքագիծ,
- ✓ մանկավարժական ներգործությամբ սաների մեջ ձևավորել ճանաչողական ունակություններ բուսական և կենդանական աշխարհի, բնության սեզոնային երևույթների, անկենդան բնության վերաբերյալ, տալ պատկերացումներ դրանց փոխկապակցվածության մասին,
- ✓ մշակել շրջապատի նկատմամբ, հոգատար և գիտակցական վերաբերմունք, ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման սովորույթներ և հմտություններ: Ծանոթացնել վարքի կանոններին,
- ✓ հաղորդել տարրական գիտելիքներ տարվա եղանակների , դրանց հերթագայությամբ պայմանավորված բնության սեզոնային փոփոխությունների և մարդկանց կյանքում կատարվող փոփոխությունների մասին,
- ✓ տարրական պատկերացումներ տալ ջրի, հողի, անձրևի, ձյան, քամու հատկությունների մասին,

- ✓ սովորեցնել արտահայտել գործունեությունից տպավորությունները,
- ✓ ձևավորել բնության տարրերի պատճառահետևանքային տարրական կապերը հասկանալու կարողություն,
- ✓ շարունակել ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու կարողություն,

- ✓ խորացնել սաների պատկերացումները մասնագիտությունների մասին:

Վերջնարդյունքներ (Հապավում՝ ԻՇԱ)
✓ ունենա սեռադերային պատկերացումներ իր մասին, ✓ իմանա ընտանիքի անդամների անուններն ու ազգանունները, ✓ ունենա պատկերացումներ հայրենի երկրի, մայրաքաղաքի, իր բնակավայրի (քաղաք, գյուղ, տուն) մասին, ✓ իմանա իր հասցեն, ✓ կողմնորոշվի իրեն ծանոթ միջավայրում, ✓ խոսի իր նվաճումների մասին, ✓ ճանաչի ընտանիքը, տարբերակի ընտանեկան կապերը (ընտանիքի անդամներ), ✓ ճանաչի իր երկրի պետական դրոշը, զինանշանը, օրհներգը, ✓ ունենա գիտելիքներ որոշ ազգային տոների մասին, ✓ ճանաչի ազգային հագուստի (տարազ) որոշ տարրեր, ✓ ճանաչի որոշ մասնագիտություններ և աշխատանքային գործիքներ, ✓ ճանաչի և անվանի մրգերը /խնձոր, տանձ ծիրան, դեղձ, բանան, սալոր/, ✓ ճանաչի, անվանի բանջարեղենը /լոլիկ, վարունգ, պղպեղ, գազար/ , ✓ տարբերակի միրգն ու բանջարեղենը՝ ըստ արտաքին տեսքի և համի, ✓ ճանաչի և անվանի ծաղիկները ըստ արտաքին տեսքի և գույնի/ վարդ, կակաչ,մանուշակ և այլն/, ✓ ճանաչի ծառերի տեսակները (պտղատու և դեկորատիվ,) և կառուցվածքը (բուն, ճյուղ , տերև, պտուղ), ✓ ճանաչի թռչուններին, տարբերի՝ ըստ իրենց արտաքին տեսքի /աղավնի, հավ, թութակ/ ✓ ծանոթանա ընտանի կենդանիներին և նրանց ձագերին: ներկայացնի նրանց օգտակարությունն ու նշանակությունը, ✓ ճանաչի տարվա եղանակները,տարբերակի նրանցում տեղի ունեցող սեզնային փոփոխությունները/ գարուն, ամառ, աշուն, ձմեռ/ ✓ անվանի և ճանաչի բնության տարրերը՝ ջուր, օդ, արև և այլն, ✓ ընկալի բնության երևույթների պատճառահետևանքային տարրական կապերը, ✓ նկատի, բնության գեղեցկությունը, ✓ դրսևորի հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ, ✓ կարևորի մարդու աշխատանքը բնության մեջ, ✓ դրսևորի ճիշտ վարքագիծ բնության գրկում, ✓ անվանի հիմնական հույզերը, ✓ բացատրի սեփական հույզերի պատճառները, ✓ ապրումակցի ուրիշների հույզերին, ✓ մասնակցի հողամասում 20-25 րոպե տևողությամբ աշխատանքներին, ✓ հորինի և խաղա դերային խաղեր, ✓ խաղի մեջ կատարի դերաբաշխումներ, ✓ հետևի վարքի կանոնների, ✓ համագործակցի հասակակիցների հետ, ✓ ինքնուրույն հանվի և հագնվի,

- ✓ տարբերակի առողջ և անառողջ սնունդը:
- ✓ հետևի առողջության և անվտանգության պահպանման կանոններին,
- ✓ դրսևորի սոցիալական հմտություններ,
- ✓ հասկանա սեփական արարքների հետևանքները,
- ✓ հասկանա սեփական իրավունքներն ու պարտականությունները,

- ✓ օգնի հասակակցին,
- ✓ հետևի վարքի կանոններին,
- ✓ մասնակցի խաղերին և խաղային իրավիճակներին:

Բովանդակություն

«Իմ ընտանիքը»,
«Ես և իմ ընկերները»
«Իմ մարմինը»
«Անձնական հիգիենա»
«Զգայարաններ»
«Հայաստանն իմ տունն է»
«Իմ քաղաքը, գյուղը»
«Իմ փողոցը»
«Իմ մանկապարտեզը»
«Անվտանգ միջավայր»,
«Ազգային տոներ»
«Իմ իրավունքներն ու պարտականությունները»
«Ընտանի կենդանիներ»
«Վայրի կենդանիներ»
«Միջատներ», «Թռչուններ»
«Պտղատու ծառեր»
«Դեկորատիվ ծառեր»,
«Ծաղիկներ», «Սնկեր»
«Միրգ»
«Բանջարեղեն»
«Վիտամիններ»
«Սննդամթերք»
«Բնության երևույթներ»
«Օդ», «Արև, դրա դերն ու նշանակությունը», «Հող»
«Ջուր», «Ջրային աշխարհ»
«Մասնագիտություններ», «Սպասք», «Կահույք», «Առողջ սնունդ»
«Առողջ ապրելակերպ և սպորտ»

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային

- Խաղեր.
- Պարապմունքներ.
- Մշակութային այցեր.
- Նախագծային աշխատանք.էքսկուրսիա,
- զբոսանք.
- Տոներ, միջոցառումներ.
- Բեմականացումներ, թատրոն.
- Փորձարարություն.
- Աշխատանք կենտրոններում.
- Աշխատանք բնության անկյունում, բակում, բանջարանոցում,

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝
Շ - (ա), (զ), ԽՀ- (բ), (դ),(ը),),(թ), Ի -(բ), (գ),(դ), (ե)(ը), ՀՍԱ-(գ), (դ),(ե).(զ)
ԻԱԱ -(բ), (դ),(ը) ,(թ),

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

Մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորումը միջին տարիքային խմբում սաների մտավոր զարգացմանը նպաստող գործընթաց է, որը նպատակաուղղված է՝

- նպաստելու իմացական գործընթացների, ճանաչողական հետաքրքրության զարգացմանը.
- խթանելու հաղորդակցական հմտությունների,
- նպաստելու անձնային որակների ձևավորումն ու զարգացումը:

Ծրագիրն իր մեջ ներառում է հետևյալ բաժինները՝

Նախաթվային՝

- ✓ Մեծություն,
- ✓ Չև,
- ✓ Տարածության մեջ կողմնորոշում,
- ✓ Ժամանակի մեջ կողմնորոշում,

Թվային՝

- ✓ Քանակ և հաշիվ:

Մեծություն

Երկարություն- Ամրապնդել «երկար», «կարճ» հասկացությունների մասին սաների ունեցած պատկերացումները: Տարբեր եղանակներով համեմատել 3 առարկաների երկարությունը: Ամրապնդել «կարճ», «երկար», «հավասար են» արտահայտությունները:

Բարձրություն - Ամրապնդել «բարձր», «ցածր», «բարձրությամբ հավասար» հասկացությունները: Տարբեր եղանակներով համեմատել 3 առարկաներիի բարձրությունը:

Լայնություն- Ամրապնդել «լայն», «նեղ», «լայնությամբ հավասար» հասկացությունները: Տարբեր եղանակներով համեմատել 3 առարկաների լայնությունը:

Հաստություն- Ամրապնդել «հաստ» «բարակ», «հաստությամբ հավասար» հասկացությունները: Տարբեր եղանակներով համեմատել 3 առարկաների հաստությունը:

Չև -Չևավորել տարրական պատկերացումներ երկրաչափական մարմինների և պատկերների մասին՝ խորանարդ, գունդ, բուրգ, գլան, քառակուսի, եռանկյուն, շրջան և ուղղանկյուն:

Տարածության մեջ կողմնորոշում- Ամրապնդել տարածական հիմնական հասկացությունների մասին սաների ունեցած պատկերացումները՝ կողմնորոշվելով սեփական մարմնի դիրքով՝ աջ, ձախ, վերև, ներքև, առաջ, հետ, հեռու մոտ, վրա, տակ, ներս, դուրս:

Ժամանակի մեջ կողմնորոշում- Սաներին ծանոթացնել օրվա մասերին՝ առավոտ, կեսօր, երեկո և գիշեր:

Թվային – ձևավորել պատկերացումներ 1-5 թվերի վերաբերյալ, տալ պատկերացումներ, որ յուրաքանչյուր թիվ ունի 1 հաջորդ թիվ և մեկ նախորդ թիվ, ծանոթացնել մինչև 5 թվի կազմությանը:

Խնդիրներն են՝

- ձևավորել մաթեմատիկական նախագիտելիքներ՝ նախաթվային և թվային,
- զարգացնել մտավոր գործողություններ կատարելու կարողություններ՝ համեմատում, խմբավորում, համակարգում, համադրում,
- ծանոթացնել 1-5 թվանշաններին,
- սովորեցնել առանձին տարրերից ստանալ թվի կազմություն. Օրինակ՝ 5-ը՝ 1,1,1,1, և նոր-ից 1 է, կամ 3 և 2, 4 և 1 :
- ձևավորել երկրաչափական մարմինների և պատկերների վերաբերյալ պատկերացումներ
- մշակել տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու կարողություններ,

- ձևավորել համատեղ գործունեություն ծավալելու կարողություն,
- զարգացնել տարբեր նյութերով աշխատելու կարողություն,

Վերջնարդյունքներ՝ (Հապավում՝ ՄՏՊ)

- ստեղծել նպաստավոր պայմաններ ինքնուրույն գործունեության զարգացման համար:

1. կատարի ուղիղ և հետ համրանք 5-ի սահմանում,
2. կատարի տարբեր զգայարաններ ակտիվացմամբ համրանք՝ 5-ի սահմանում,
3. հասկանա և ներկայացնի առանձին տարրերով մինչև 5 թվերի քանակական կազմությունը,
4. ճանաչի 1-5-թվանշաններ,
5. կատարի պարզ թվաբանական գործողություններ 5-ի սահմանում
6. ձևակերպի հարցեր՝ կիրառելով «քանի», «որքան»,
7. համեմատի միատեսակ առարկաների քանակը՝ անկախ առարկաների հատկություններից (ձևից, չափ, գույն, նյութ)
8. տարբերի նախորդ և հաջորդ թվերը 1-5-ի սահմաններում,
9. նկարագրի առարկաների հատկանիշները, համեմատի առարկաները՝ ըստ հատկանիշի (2 հատկանիշ)
10. խմբավորի առարկաները՝ ըստ հատկանիշի (2 հատկանիշ)
11. ճանաչի և անվանի երկրաչափական մարմինները և պատկերները (խորանարդ, գլան, գունդ, շրջան, եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն)
12. որոշի երկրաչափական պատկերների կողմերի, գագաթների և անկյունների քանակը,
13. հայտնաբերի շրջապատում երկրաչափական պատկերների նման առարկաներ,
14. ստեղծի մասերից ամբողջական պատկերներ,
15. ամբողջը բաժանի հավասար և անհավասար մասերի,
16. կառուցի երկրաչափական պատկերներով նոր պատկեր,
17. տարբերի տարածական ուղղությունները՝ աջ, ձախ, վերև, ներքև, առաջ, հետ, վրա, տակ, հեռու, մոտ, ներս, դուրս,
18. կիրառի տարածություն բնութագրող հասկացություններ *(աջ, ձախ, վերև, ներքև, առաջ, հետ, հեռու, մոտ, վրա, տակ, ներս, դուրս)*,
19. տարբերի ժամանակային հասկացությունները՝ օրվա մասերը՝ առավոտ,կեսօր, երեկո գիշեր, երեկ, այսօր, վաղը, շաբաթ, շաբաթվա օրեր, ամիս,տարի,
20. կիրառի ժամանակը բնութագրող հասկացություններ,
21. կատարի մաթեմատիկական էլեկտրոնային խաղ-վարժություններ:

Բովանդակություն

Ծանոթացում երկրաչափական մարմիներին, պատկերներին
Ծանոթացում առարկայի հատկանիշներին
Ժամանակային պատկերացումներ
Տարածական պատկերացումներ
Ուղիղ և հետ հաշիվ 1-5 սահմանում
1-5 թվանշանների հետ ծանոթացում
2-5 թվերի միավոր կազմի ուսուցում
Հաջորդ, նախորդ, կից թվերի ուսուցում

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային

Խաղեր.

Պարապմունքներ.

- Աշխատանք կենտրոններում.
- էքսկուրսիա, զբոսանք.

Ինքնուրույն գործունեություն.
Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ Շ (թ), ԽՀ- (բ), (ը), (թ), Ի (ա), (բ), (գ), (դ), ՀՍԱ (գ), (դ), (ե) , ԻԱԱ (ե), (զ):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Անձի տարիքային զարգացման ոչ մի շրջանում ֆիզիկական դաստիարակությունը այնպես ցայտուն չի ներգործում առողջության, ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության, ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման և սոցիալականացման վրա, ինչպես նախադպրոցական տարիքում:

Նախադպրոցականի ֆիզիկական կուլտուրան ոչ միայն մկանային վարժություն է, հիգիենիկ հմտությունների և առողջության ամրապնդում, այլև զգացմունքի, ուշադրության, կամքի, գեղեցկության արտահայտության, որը հանրագումարային ցույց է տալիս երեխայի բազմաբնույթ կուլտուրան:

Անկասկած դրանք այն հիմնական բաղադրիչներն են, որոնց վրա հենվելով իրականացվում է երեխայի բազմակողմանի դաստիարակությունը՝ մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, էկոլոգիական և այլն: Ֆիզիկական դաստիարակության բազմազան միջոցների արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է կիրառել համակողմանի մոտեցում, կանոնավոր համագործակցել ծնողների հետ:

Նման հայեցակարգային դրույթները առաջադրում են նպատակաուղղված ամրապնդել երեխաների առողջությունը բարձրացնել ֆունկցիոնալ և ֆիզիկական պատրաստվածության մակարդակը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

- առողջության ամրապնդումը ու պահպանումը, օրգանիզմի կոփումը և դիմադրողականության բարձրացումը, հենաշարժողական ապարատի ամրապնդումը, ճիշտ կեցվածքի ձևավորումը և հարթաթաթության կանխարգելումը, ֆիզիկական ներդաշնակ զարգացումը, օրգանիզմի ֆունկցիոնալ համակարգի բարելավումը
- կենսականորեն անհրաժեշտ շարժողական կարողությունների և հմտությունների /քայլք, ցատկ, սողանցում, մագլցում,նետում, քայլք՝ դահուկներով, հեծանիվ վարել, լող/ ձևավորում ինչպես նաև դրանց տեխնիկայի ճիշտ կատարում
- շարժողական ընդունակությունների /արագաշարժության, դիմացկունության, մկանային ուժի, ճարպկության, հավասարակշռության,կոորդինացիայի/ մշակում
- շարժախաղերի և մարզախաղերի տարրերի ուսուցում, խաղային գործողությունների

ձևավորում, զարգացում

- շնչառական և մանր մոտորիկայի զարգացման վարժությունների ուսուցում
- տեսական գիտելիքների հաղորդում ֆիզիկական վարժությունների օգտակարության, ֆիզկուլտուրայի պատմության, օլիմպիական խաղերի, առողջ ապրելակերպի վերաբերյալ

- անձի բարոյակամային դրական գծերի՝ ինքնուրունության, ակտիվության, ընկերասիրության, համագործակցության դաստիարակում

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծումը պայմանավորված է երեխայի օրգանիզմի վրա տարբեր միջոցների միասնական ներգործությամբ, որոնց զուգակցումը կախված է մանկապարտեզի երեխաների առողջական վիճակից, ընտանեկան-կենցաղային պայմաններից, էկոլոգիայի, սեռի, անհատական և տարիքային առանձնահատկություններից:

Ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծման գործում էական նշանակություն ունեն նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունում հիգիենիկ բարենպաստ պայմանների ստեղծումը, բավարար չափով բաց օդում լինելը և, ամենակարևորը, երեխաների նկատմամբ դրսևորվող բարեխիղճ վերաբերումքը, հոգատարությունն ու խնամքը:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրականացվում են ռեժիմի, սննդի, կուլտուր-հիգիենիկ ունակությունները ու հմտությունների, ինչպես նաև կոփման միջոցառումների փոխկապակցությամբ, որոնց հիմքում ընկած են տարբեր ձևերով կազմակերպվող ֆիզկուլտուրայի ամենօրյա միջոցառումները, սանի ազատ, ինքնուրույն շարժողական գործողությունը:

Սաները սովորում են վարքի կուլտուրա և այդ բոլորին պետք է տիրապետեն ու պարբերաբար կրկնեն, ամրապնդեն տարիքային հաջորդ խմբերում՝ որակական նոր կատարելությամբ:

Օրվա ընթացքում դաստիարակը կազմակերպում է խաղեր և վարժություններ տարբեր առարկաներով:

Ծրագրում տրված են նաև շարժողական ընդունակությունների մշակման, մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման, հարթաթաթության կանխման և շնչառությունը կարգավորող վարժություններ, որոնք պետք է իրականացվեն մանկարապարտեզի ուսումնադաստիա-րակչական ամբողջ աշխատանքի ընթացքում:

Համաձայն ծրագրի՝ օրվա ընթացքում շարժողական ռեժիմը ապահովվում է մարմնամարզական վարժությունների և երաժշտառիթմիկ պարապմունքների միջոցով, ըստ որի առաջադրվող նյութը բովանդակում է սպորտային վարժությունների պարզ ձևեր, նմանողական շարժումներ, ազգային պարային շարժումների տարրեր և այլն:

Շարժողական ընդունակությունների մշակման և շարժողական կարողությունությունների ու հմտությունների զարգացման համար վարժություններն ընտրվում են՝ հաշվի առնելով երեխաների անհատական և տարիքային հնարավորությունները, պարապմունքների և առօրյա աշխատանքների կազմակերպման համար նախադպրոցական ուսումնական հաստաությունում ստեղծված պայմանները:

Առավոտյան մարմնամարզություն - Սկսած կրտսեր I խմբից՝ նախատեսվում է ամեն օր, մինչև նախաճաշ անցկացնել առավոտյան մարմնամարզություն:

Ծրագրով առաջարկվում է ամեն օր կատարել առավոտյան մարմնամարզություն, որի համալիրները պետք է կառուցվի ծանոթ, պարզ, մատչելի, դինամիկ, ուշադրությունը

կենտրոնացնող, համազարգացնող, նմանողական խաղային վարժություններից և պարային շարժումներից:

Ցերեկային քնից հետո սաներին արթնացնելու, օրգանիզմը թարմացնելու, ակտիվ գործունեության նախապատրաստելու նպատակով առաջարկվում է ամեն օր անցկացնել մարմնամարզական վարժություններ՝ երեխաների ծանոթ խաղ վարժություններից, պարային շարժումներից, որոնք զուգակցվում են օդալոգանքով (տևողությունը՝ 10-15 րոպե): Շարժողական ռեժիմում սաների ինքնուրույն շարժողական գործունեությանը մեծ տեղ էհատկացված: Երեխան ազատ ընտրում է իր նախասիրություններին համապատասխանողգործունեություն, որտեղ զարգանում է նրա ստեղծագործական ակտիվությունը: Երեխանինքնահաստատման հնարավորություն է ձեռք բերում: Դառնալով իրերի, գործողությունների,հարաբերությունների տեր, նա ինքնաճանաչողության որակ է ձեռք բերում, մշակվում ենհասակակիցների հետ համագործակցելու ունակություններ:

Սաների ինքնուրույն շարժողական գուրծունեությունը պայմանավորված է ակտիվությունը խթանող բազմազան պարագաների առկայությունը բակում և շենքի ներսում: Առաջարկվում է լայնորեն օգտագործել ծանոթ, ժողովրդական շարժախաղեր, մարզական տարրերով խաղեր ու սպորտային վարժություններ: Երեխաների ֆունկցիոնալ հնարավորություններն ընդլայնելու, շարժողական կարողությունները զարգացնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել պարզագույն արշավներ, հեռավոր զբոսանքներ օգտվելով բնական արգելքներից:

Ֆիզիկական դաստիարակության աշխատանքներն ամփոփելու նպատակով ծրագրով առաջարկվում է անցկացնել ժամանցներ, մարմնամարզական հանդեսներ, մարզական-մասսայական, առողջության օր, տասնօրյակներ:

Ծրագրային նյութը բարդանում է տարիքային մի խմբից մյուսին անցնելիս: Ընդ որում, կարևորվում է նոր շարժումների տեխնիկայի յուրացումը և մանկական օրգանիզմի ֆիզիկական բեռնվածության աստիճանական բարձրացումը: Տարիքային յուրաքանչյուր խմբի համար տրված ուսուցման միայն նոր նյութը: Յուրացված կարողությունների ամրապնդման ու կատարելագործման, մարզական ընդունակությունների և աշխատունակության բարձրացման համար նախատեսվում է սպորտային վարժությունների և խաղերի, խաղային վարժությունների պարբերական կրկնություն՝ տարիքային բոլոր հաջորդող խմբերում, որակական նոր բարձրությամբ:

Ծրագիրը իրականացնելիս անհրաժեշտ է կարևորել հետևալ հանգամանքները.

1.Նպատակաուղղված մշակել շարժողական ընդունակությունները, որոնք էականորեն կնպաստեն հիմնական շարժողական գործողությունների արագ և տեխնիկաես ճիշտ տիրապետմանը:

2. Հնարավորինս հաճախ ֆիզկուլտուրային պարապմունքները անցկացնել բացօթյա:

3. Անհրաժեշտ է սովորեցնել սաներին գիտակցաբար հսկել սեփական շարժողական գործողությունների կատարման ընթացքը:

4. Համավարակի պայմաններում անհրաժեշտ է պահպանել շարժողական ռեժիմը, մշտապես հանձնարարել տնային առաջադրանքներ որում պետք է ընդգրկված լինեն շնչառական և ընդհանուր դիմացկունությունը մշակող վարժություններ:

5. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել տեսական գիտելիքների հաղորդմանը և դրանց կիրառմանը գործնականում:

Նախադպրոցականները ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներին պետք է մասնակցեն (միջին և ավագ խումբ) սպորտային համազգեստով և մարզակոշիկներով, ձմռանը տաք մարզահագուստով և տաք կոշիկներով: Դահլիճում և մարզահրապարակում պետք է խստորեն պահպանել սանիտարահիգենիկ պահանջները և անվտանգության կանոնները: Ֆիզիկական դաստիարակության գործընթացի արդյունավետությունը ուսումնասիրելու, ինչպես նաև երեխաների ֆիզիկական պատրաստությունը ստուգվում է հետևյալ վարժություններով:

Վազք 10մ ընթացքից, վազք բարձր մեկնարկից 30մ, հեռացատկ տեղից, ավազապարկի կամ թենիսի գնդակի նետում աջ և ձախ ձեռքով, դիացկունության վազք 5 տարեկանների համար 90մ, 6 տարեկանների համար 120մ:

4–ից մինչև 5 տարեկան

Խնդիրները:

1. Առողջության պահպանում և ամրապնդում, կոփում, օրգանիզմի դիմադրողականության բարձրացում, ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացում, մրսածության հիվանդությունների մեղման, շնչառական վարժությունների կատարում, ներդաշնակ ֆիզիկական զարգացում, ճիշտ կեցվաքի ձևավորում, հարթաթաթության կանխում, առողջ ապրելակերպի վարում:
2. Կենսական կարևոր հիմնական շարժողական գործողությունների (քայլք, վազք, ցատկ, նետում, մագլցում և այլն) ուսուցում, շարժողական ընդունակությունների արագաշարժության, ճարպկության և հատկապես ընդհանուր դիմացկունության մշակում:
3. Շարժախաղերի և սպորտային վարժությունների ուսուցում, ձեռքի և դաստակի մկանների զարգացում: Ինքնուրույն խաղալ և համագործակցել ընկերների հետ:
4. Տեսական գիտելիքների հաղորդում օլիմպիական խաղերի ծագման, առողջ ապրելակերպի վարման, ճիշտ կեցվածքի պահպանման վերաբերյալ:
5. Դաստիարակել փոխօգնության, համագործակցություն, ընկերասիրություն, համարձակություն, կամք:
6. Խթանել, երեխաների շարժողական ակտիվությունը, որ օրվա ընթացքում այն կազմի 11-ից 12 հազար քայլ:

Գիտելիքներ ֆիզկուլտուրայի մասին

1. Հաղորդել գիտելիքներ ամառային և ձմեռային մարզաձևերի, հայ անվանի մարզիկների, օլիմպիական խաղերի ծագման և խորհրդանիշների մասին:
2. Հաղորդել գիտելիքներ տնային հանձնարարականների կատարմամբ, հայ և այլ ազգի շարժախաղերի, առողջ ապրելակերի վարման, շարժողական ակտիվության էության,

սեփական մարմնի տարբեր մասերի մաքրության, ճիշտ կեցվածքին, գրելուն, կարդալուն նպաստող ֆիզիկական վարժությունների մասին:

3. Հաղորդել գիտելիքներ ֆիզիկական պատրաստվածության, շարժողական ընդունակությունների (արագաշարժության, դիմացկունության, ուժի և այլն), հիմնական շարժողական գործողությունների, սպորտային վարժությունների, ֆիզիկական վարժությունների ելման դիրքերի մասին:

Աշխատանքի ձևերը	Կազմակերպման առանձնահատկությունները
1. Ուսումնական աշխատանք՝ Ֆիզկուլտուրայի պարապմունքներ	Շաբաթական 2 պարապմունք՝ 20-25 րոպե տևողությամբ
2. Ֆիզկուլտ-առողջարարական աշխատանքներ օրվա ընթացքում	
-Առավոտյան մարմնամարզություն	Ամեն օր 6-8 րոպե տևողությամբ
-Շարժողական նախավարժանք ցերեկային քնից հետո, օդային և ջրային արարողակարգեր	Ամեն օր 5-10 րոպե
- Ֆիզկուլտ–րոպե /դադար/	Ըստ անհրաժեշտության՝ պարապմունքների ընթացքում 1-3 րոպե
-Բացօթյա ֆիզիկական վարժություններ և շարժախաղեր	Ամեն օր
-Զբոսանքներ, արշավներ	Ամիսը մեկ անգամ 40-50 րոպե
3. Ինքնուրույն շարժողական գործունեություն	Ամեն օր, բնույթը և տևողությունը կապված սաների անհատական հնարավորություններից և նրանց պահանջներից: Այն անցկացվում է դաստիարակի հսկողությամբ:
4. Ակտիվ հանգիստ	Ամիսը 1-2 անգամ՝ 20-30 րոպե
Ֆիզկուլտուրայի ժամանցներ	Տարին 1-2 անգամ՝ 40-50 րոպե
Ֆիզկուլտուրայի տոներ	Տարին 1-2 անգամ
Առողջության օր	Տարին 1-2 անգամ

<u>Հիմնական շարժումներով վարժություններ</u>

Շարում և շարափոխում. ինքնուրույն շարժվել ենթախմբերով և ամբողջ խմբով: Կազմել շրջան,զույգերով, տողան՝ միասյուն շարքից: Հավասարվել կողմնորոշիչով (հատակին նշված գծով): Դարձումներ աջ, ձախ, ետ:

Քայլք. թաթերի, կրունկների, ներբանների արտաքին կողմի վրա՝ փոքր և լայն քայլերով: Քայլել օձաձև՝ տեղադրված առարկաների միջով և ջեռքերի տարբեր դիրքերով (գոտկատեղին, կողմ,

մեջքի ետևում)։ Կից քայլեր առաջ, կողմ և ետ։ Քայլքի հերթագայումը վազքով, ցատկով՝

ձեռքերի տարբեր դիրքերով: Քայլել շարասյունով, փոխելով տեմպը և ուղղությունը՝ ուղղապահի փոփոխմամբ:

Վազք. ոտնաթաթերին, ծնկները վեր բարձրացնելով, լայն քայլերով, շարասյունով, զույգերով, տարբեր ուղղություններով, շրջանով, միմյանց ձեռք բռնած, "օձաձև", շրջանցելով առարկաները, փոխելով շարժման ուղղությունը և տեմպը: Վազելով բռնել իր խաղընկերոջը և խուսափել նրանից տարբեր իրադրություններում: Դանդաղ վազք 1-1,5 ր: Վազել 40-60 մ միջին արագությամբ (3-4 անգամ); Վազքը հերթագայել քայլքով 80-120 մ վազքահեռավորություններում (2-3 անգամ): Դանդաղ վազք տեղանքում 240 մ: Մաքոքավազք՝3 անգամ 5-ական մ:

Ցատկեր. երկու ոտքի վրա տեղում, ոտքերը միասին, ոտքերը զատած, պտտվելով իր շուրջը: 20 ցատկ (2-3 անգամ) ընդմիջումներով: Ոստյուններ առաջ, շրջանից-շրջան: Ցատկ մեկ ոտքի վրա (աջ, ձախ): Ցատկ 5-10 սմ բարձրությամբ առարկաների վրայով: Հաջորդականորեն ցատկել 4-6 գծերի միջով (գծերի հեռավորությունը միմյանցից 40-50 սմ): Տեղից հեռացատկ: Ցատկ 20-30 սմ բարձրությունից: Ցատկել կարճ ցատկապարանով:

Նետումներ. առարկաների միջով միմյանց գլորել գնդակները, օղակները: Գնդակի վերնետումն որսում (3-4անգամ): Գնդակը միմյանց փոխանցել ցածից, գլխի վրայով և որսալ (հեռավորությունը 1,5 մ): Գնդակը նետել երկու ձեռքով՝ 2մ հեռավորության վրա գտնվող արգելքի վրայով: Գնդակը նետել հեռու (տարվա վերջին՝ 3,5-6,5 մետրից ոչ պակաս):

Սողանցում և մագլցում. սողանցում՝ առնվազն 10 մ: Սողանցում աջ և ձախ կողքով առարկաների տակով, առարկաների միջով: Սողանցում հորիզոնական և թեք տեղադրված մարզանստարանի վրայով՝ փորի վրա ձգվելով ձեռքերով: Չորեքթաթ շարժվել՝ հենվելով ներբանների և ափերի վրա: Մագլցել մարզապարանով՝ աջ և ձախ:

Հավասարակշռություն. քայլել գծի վրա՝ ավազե պարկը դրված գլխին: Դարձումներ սահմանափակ մակերեսի վրա : Քայլեր մարզանստարանի վրայով՝ ձեռքերը տարբեր դիրքերով: Վազքից անմիջապես հետո բարձրանալ մարզանստարանին՝ պահպանելով հավասարակշռությունը: Պահպանել հավասարակշռությունը՝ թաթերին կանգնած, ձեռքերը վեր, մեկ ոտքին կանգնած, ձեռքերը գոտկատեղին, կողմ դրություններով: Պտտվել երկու կողմերով՝ ձեռքերը գոտկատեղին կամ կողմ դիրքերով:

<u>Ընդհանուր զարգացնող վարժություններ</u>

Ձեռքերի և ուսագոտու համար. ձեռքերը բարձրացնել առաջ, կողմ, վեր և իջեցնել: Ձեռքերըառաջ և կողմ դրություններում սեղմել և բացել մատները, պտտացնել դաստակները: Ձեռքերը հերթականությամբ բարձրացնել առաջ և վեր, իջեցնելով՝ թափով տանել ետ: Արմունկն ծալված կատարել շրջանաձև պտույտներ:

Ոտքերի համար. բարձրանալ ոտնաթաթերին և կանգնել: Ոտքերը հերթականությամբ դնել առաջ՝ սկզբում կրնկի, ապա թաթի վրա և կատարել երեք դոփյուն: Կքանստել՝ ձեռքերը գոտկատեղին, կողմ, առաջ: Ծնկային հոդում ծալված ոտքն ուղղել, կրկին ծալել և իջեցնել: Ձգել թաթերը, ծալել ներբանը: Ոտքի մատներով հավքել պարանը, ներբանով բռնել և տեղից տեղ տեղափոխել առարկաները:

Իրանի համար. ձեռքերը գոտկատեղին՝ թեքվել կողմ: Ձեռքերը տանել կողմ (թափով և սահուն): Կանգնել ոտքերը միասին, կողմ տարածած, թեքվել առաջ՝ մատնելով հասնել ոտնաթաթերին: Թեքվել կողմ՝ ծնկներին կանգնած դիրքից գնդակը գլորել իր առանցքի շուրջը: Բարձրացնել մեկ ոտքը, ծնկատակով առարկան փոխանցել մեկ ձեռքից մյուսը: Նստել և կանգնել՝ ոտքերը խաչաձև դրությամբ: Մեջքի վրայից շրջվել փորի վրա, վեր պարզած ձեռքերով առարկան բռնած: Փորի վրա պառկած բարձրացնել առաջ պարզած ձեռքերը, ուսերը և գլուխը:

<u>Շարժախաղեր</u>

Վազքով. Ինքնաթիռ, Գունավոր ավտոմոբիլներ, «Արջի մոտ՝ անտառում», «Ծիտիկները և կատուն», «Գտիր քո զույգը», «Իջեցրու չխկչխկանը», «Անտուն նապաստակը», «Բռնոցի»:

Ցատկերով. «Նապաստակները և գայլը», «Աղվեսը հավանոցում», «Մոխրագույն նապաստակը լվացվում է»:

Սողանցումով և մագլցելով. «Հովիվը և նախիրը», «Թռչունների չուն», «Փիսիկները և շնիկները»:

Նետելով և բռնելով. «Գցիր-բռնիր», «Հարվածիր մականին», «Գնդակը ցանցի վրայով»:

Տարածության մեջ կողմնորոշվելով. «Գտի՛ր որտեղ է պահված», «Գտի՛ր և լռիր», «Ով գնաց», «Տապկնոցի»:

Սահնակ – սահել սահնակով բլրակից: Բարձրանալ (սահնակով) բլրակի վրա: Արգելակել ընթացքը՝ բլրակից ցած սահելիս:

Դահուկաքայլք – շարժվել առաջ՝ հաջորդական կից քայլերով՝ իրար ետեվից, քայլել անհարթ տեղանքով: Կատարել դարձումներ տեղում, կանգնած, շրջվել երկու կողմի վրա: Ելնել բլրակին՝ կից քայլերով, ուղիղ, թեք և զիգզագ: Ինքնուրույն վերցնել դահուկները և դնել տեղը: Հանել և հագնել դահուկները, դրանց տանել թևի տակ: Դահուկներով անցնել 0,5-1 կմ:

Խաղեր - «Որքան հեռու, այնքան լավ», «Դարպասիկներ», «Կարուսելն անտառում»:

Հեծանիվ – վարել երկանիվ և եռանիվ հեծանիվը՝ ուղիղ ճանապարհով առաջ, շրջաձև, կատարել դարձումներ՝ աջ-ձախ:

Խաղեր ջրում - «Ձկնկուլներ», «Փայտահատը ջրում», «Կարուսելներ», «Ֆուտբոլ ջրում», «Վազք գնդակի ետևից», «Ցույց տուր կրունկներտ», Լողալ ռետինե օղակներով:

Մինչև 5 տարեկան սանը գիտի ամառային, ձմեռային մարզաձևերը, անվանի հայ մարզիկներին, օլիմպիական խաղերի ծագման և խորհրանիշների մասին, առողջ ապրելակերպի, սեփական մարմնի խնամքի և շարժողականության ակտիվության կարևորության մասին: Ճիշտ կեցվածքի պահպանման և հարթաթաթության կանխարգելման մասին: Ցուցադրում է ֆիզիկական վարժությունների ելման դիրքերը: Խաղում է շարժախաղեր,

հիմնական շարժողական գործողություններով և մարզախաղերի տարրերի կիրառմամբ: Տիրապետում է դահուկասարքին, վարում է ինքնագնաց, լողում է, ջրում կատարում է ոտքերի և ձեռքերի շարժումներ: Կատարում է պարզ պարային շարժումներ, ինքնուրույն կատարում է տարբեր բնույթի վարժություններ: Դրսևորում է համագործակցություն, կարգապահություն և բարեկիրթ վարք:

Պետք է կարողանա՝

Շարժողական գործողություն	Տղաներ		Աղջիկներ	
	Տարվա սկիզբ	Տարվավերջ	Տարվա սկիզբ	Տարվավերջ
Վազք 10 ընթացքից	2.7 վրկ.	2.2 վրկ	2.9 վրկ	2.3 վրկ
30 մ վազք բարձր մեկնարկից	9.5 վրկ	8.1 վրկ	10.2 վրկ	8.9 վրկ
Տեղից հեռացատկ	77.1 սմ	97.4 սմ	70.5 սմ	90.2 սմ
Ավազապարկի նետում (150 գրամ) աջ ձեռքով	3.5 մ	5.1 մ	3.2 մ	4.1 մ
Ավազապարկի նետում (150 գրամ) ձախ ձեռքով	2.1 մ	4.0 մ	2.0 մ	3.5 մ
90 մ վազք	32.1 վրկ.	29.5 վրկ.	32.1 վրկ.	29.5 վրկ.

Կոփում

Այս տարիքային շրջանում պահպանվում է կոփման այն արարառողակարգերը, որը կատարվում է 4-5 տարեկանների մոտ:

Օդային լոգանքները պետք է անցկացնել ամբողջ տարվա ընթացքում: Օդային լոգանքը զուգակցվում է հիգիենիկ մարմնամարզության հետ 10-15 րոպե է: Կոփման միջոցներից է արևային լոգանքների ընդունելը: Այդ արարողության օգտակարությունն ավելի բարձր է առավոտյան ժամը 9-11-ը ընկած ժամանակահատվածում: Արևային արարողությունները պետքէ սկսել 5-6 րոպեից, ապա այն անհարժեշտ է մեծացնել աստիճանաբար և հասցնել մինչև 10-15 րոպեի:

Ջրային արարողությունները կոփման լավագույն միջոցներից են:

Դրանց մեջ են մտնում՝ ջրաշփումները, ջրցանումը, ջրշփումը, մինչև գոտկատեղը լվացվելը, լողը:Ընդհանուր ջրցանում կամ ցնցուղ. նախ պետք է ջերմաստիճանը լինի 34 աստիճան, ապա այն աստիճանաբար իջեցնել և հասցնել մինչև 24 աստիճանի: Ջրցողումը նույնպես պետք է կատարել 34 աստիճանի ջրով: Նախապես պետք է կազմակերպել երեխաների ջրաշփումը, ապա՝ ջրցանումը, և վերջում անցնել լողի:

Ջրային լոգանքները պետք է անցկացնել այն ժամանակ, երբ արտաքին միջավայրի ջերմաստիճանը 21 աստիճանից ցածր չէ:

Նշված խնդիրները լուծվում են ամենօրյա և ամառային կոփիչ միջոցառումների միջոցով:

Խորհուրդ է տրվում կոփման ժամանակ առաջնորդվել նեքոհիշյալ ցուցումից՝

Կոփման օրը	Ջրի սկզբնական ջերմաստիճանը
1-3	37-34 ^{0}C
4-7	33-32 ^{0}C
8-11	31-30 ^{0}C
12-15	29-28 ^{0}C
Գույքի անվանումը	27-26 ^{0}C
1.Կեգլի	
2.Օղականետիչ	
3. Ավազով լցված պարկեր (քաշը 4	
4. Ռետինե գնդակներ (20 - 25 սմ)	
5. Ռետինե գնդակներ (տրամագիծ	
6. Ռետինե գնդակներ (տրամագիծ	
7. Մարմնամարզական փայտիկնե	
8. Օղախաղ(սերսո)	
9. Դրոշակներ	
10.Կարճ հյուսված քուղ (երկ. 75 u	
11. Քուղ (երկարությունը 15 – 30	
16-20	
21-25	25-24 ^{0}C

26-30	23-22 ^{0}C

Օրինակ կոփման առաջին 3 օրերում ջրի ջերմաստիճանը պետք է 37 ^{0}C -ից նվազեցնել34 ^{0}C:

ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ
4-5 տարեկանների համար

Վերջնարդյունքները (Հապավում՝ Ֆ)
1. կատարի հիմնական շարժումները, 2. պահպանի հավասարակշռությունը, 3. խաղա շարժախաղեր, 4. խաղալիս և առօրյայում ճիշտ է զուգակցի շարժողական գործողությունները, 5. հասկանա շարժումների հաջորդականությունը, 6. մասնակցի գնդակով ակտիվ խաղերի: 7. սահի սահնակով և դահուկներով, 8. վարի ինքնագնաց, 9. վարի եռանիվ և երկանիվ հեծանիվ, 10. խաղա ջրային խաղեր, 11. կատարարի ջրում կոորդինացված շարժումներ: 12. կատարի մկանային և ոսկրային համակարգի զարգացմանը նպաստող սպորտային վարժություններ, առաջադրանքներ, 13. առարկաներով կամ առանց դրանց կատարի ֆիզիկական վարժություններ, 14. խաղերում և ֆիզիկական վարժություններ կատարելիս դրսևորի կարգապահություն, 15. խաղերում և ֆիզիկական վարժություններ կատարելիս դրսևորի ակտիվություն, 16. խաղերում և ֆիզիկական վարժություններ կատարելիս դրսևորի ընկերասիրություն, համագործակցություն, 17. խաղերում և ֆիզիկական վարժություններ կատարելիս դրսևորի բարեկիրթ վարքագիծ և հարգանք դիմացինի նկատմամբ, 18. իմանա ամառային և ձմեռային մարզաձևեր, 19. ճանաչի հայ անվանի մազիկներին, 20. իմանա, թե որ մարզաձևերը տարվա որ եղանակի համար են նախատեսված, 21. իմանա որոշ հայտնի մարզիկների անուններ տարբեր սպորտաձևերում:
Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝ Շ (ա),(բ) ,(գ), (ե), (ը), ԽՀ- (բ), (ը), Ի-(բ),(գ),(ե), ՀՍԱ- (ա), (բ), (գ), (դ), (ե), ԻԱԱ -(ա),(բ), (գ) (դ), (ե)

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությունը առանձնահատուկ տեղ է գրավում նախադպրոցական տարիքի սաների գեղարվեստագեղագիտական դաստիարակության գործում: Այն սաների հոգու հայելին է,

նրանց հույզերի, զգացմունքների արձագանքը: Իսկ զգացմունքը երաժշտության հիմնականբովանդակությունն է, սաների հուզական ոլորտը ձևավորելու արդյունավետ միջոցներից մեկը: Երաժշտական դաստիարակության նպատակն է՝

- ✓ զարգացնել սաների գեղարվեստական ճաշակը,
- ✓ երաժշտության միջոցով շարունակել ընդլայնել նրանց նախագիտելիքները շրջակամիջավայրի մասին,
- ✓ սեր և հետաքրքրություն առաջացնել երաժշտության նկատմամբ:

Երաժշտական ստեղծագործությունների զգացմունքային ընկալման շնորհիվ սանը բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը, տարբերում է չարն ու բարին, տեսնում գեղեցիկը: Երաժշտությունը արտացոլվում է սանի զարգացման բոլոր ոլորտներում և կարևոր նշանակություն ունի նրա մտավոր, անձնային և գեղագիտական զարգացման գործում: Երաժշտության հմայքը, հուզականությունը, ելևէջները այնպիսին են, որ հնարավորություն են ընձեռում համադրելու ծրագրում տեղ գտած բոլոր պարապմունքների հետ:

Խնդիրն

երը՝

Ունկնդր

ում

- հետաքրքրություն առաջացնել երաժշտության նկատմամբ ,
- զարգացնել երաժշտությունը ուշադիր ունկնդրելու, ընկալելու, մտապահելու և դրան հուզականորեն արձագանքելու ունակություն,
- նպաստել ստեղծագործությունը սկզբից մինչև վերջ ունկնդրելու կարողունակությանդրսևորմանը,
- մշակել ընկերների կատարումը ունկնդրելու ցանկություն,
- զարգացնել տեմբրային լսողությունը, ռիթմը, տեմպը, դինամիկան զգալու ունակությունը,
- մշակել երաժշտության բնույթը զգալու, ծանոթ ստեղծագործությունները ճանաչելու կարողություն՝ արտահայտելով տպավորությունները,
- սովորեցնել տարբերակել հնչյունները ըստ բարձրության:

Ձայնավարժություն, երգեցողություն

- Սովորեցնել երգը կատարել ճիշտ շնչառությամբ,
- ձևավորել արտահայտիչ երգեցողության հմտություններ,
- սովորեցնել երգել առանց լարվածության,
- արտահայտիչ երգել՝ փոխանցելով երաժշտության բովանդակությունը,

- սկսել և ավարտել երգը երաժշտության դաստիարակի հետ,
- ճանաչել ծանոթ երգերը նախանվագից, մեղեդուց, երգի տարբեր հատվածներից
- հստակ արտասանել բառերը,
- մեղեդին մաքուր երգել,
- երգը կատարել որպես մենակատար, երգել խմբով,
- սաների մոտ ձևավորել երգի բովանդակությանը համապատասխան նկարներով երգելուկարողություն:

Երաժշտաշարժական վարժություններ

- սաների մոտ ձևավորել ռիթմիկ շարժվելու հմտություններ,
- սովորեցնել շարժվել երաժշտության բնույթին համապատասխան,
- սաներին սովորեցնել շրջանով, զույգերով շարժվելու, երաժշտության մասերիփոփոխությանը համապատասխան շարժումներ փոխելու ունակություն,
- բարելավել քայլքի տեսակները, վազքը՝ մեկը մյուսի ետևից, բոլոր ուղղություններով,
- սովորեցնել երաժշտության ավարտին կանգ առնել:

Պար

- բարելավել պարային շարժումները՝ թեթև վազել ձեռքերը ճոճելով պտտվել կատարելդաստակի պտույտներ,
- զարգացնել պարային շարժումները ռիթմիկ կատարելու ունակություն,
- սովորեցնել գեղեցիկ և ճիշտ կատարել ժողովրդական պարերի տարրերը,
- ձևավորել պարագաներով պարային շարժումներ կատարելու, զույգերով պարելուունակություն,
- սովորեցնել օգտագործել ծանոթ պարային շարժումները ազատ պարերում:

Խաղ

- սովորեցնել երեխաներին արտահայտիչ կերպով փոխանցել կենդանիներին բնորոշշարժումները,
- երեխաների մոտ զարգացնել երգը, պարը, խաղը բեմադրելու կարողությունը,
- երեխաների մոտ սերմանել թատերական, մանկական ներկայացումների ընկալմանմշակույթ՝ օգտագործելով դեմքի արտահայտություններ (միմիկա):

Նվագ բնական, մանկական նվագարաններով

- նվագարաններով զարգացնել երեխաների ռիթմիկ զգացողությունը,
- սովորեցնել տարբերակել երկար և կարճ հնչյունները,
- ձևավորել բնական, մանկական, նվագարաններ նվագելու կարողություն՝ իմանալով դրանց անվանումները, ճանաչելով հնչերանգները:

Հորինում (իմպրովիզացիա)

- հորինել պարզ մեղեդիներ,

- երաժշտության ներքո հորինել խաղի հերոսներին բնորոշ շարժումներ, պարիշարժումներ:

Մատների մարզանք

- երաժշտության ներքո ամրացնել սաների ափերի և մատների մկանները՝ նպաստելովնվագելու, նկարելու, պարելու և այլ կարողունակությունների զարգացմանը:

Երաժշտառիթմիկա (Ռիթմիկ զգացողության զարգացում)

- երաժշտության ներքո, պարագաներով կամ առանց պարագաների, ռիթմիկ շարժումների միջոցով զարգացնել սաների ռիթմն ու լսողությունը, ուշադրության կենտրոնացումը, հիշողությունը, ճարպկությունը:

Երաժշտական թերապիա

- նպաստել սաների առողջական համակարգի խթանմանը, լարվածության վերացմանը՝երաժշտության ներքո:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Ունկնդրում

- «Բադիկ ջան, բադիկ» խոսք՝ Գեղեցիկ Մովսիսյանի, երաժշտ՝. Յուրի Յուզբաշյանի
- «Կարապների պարը» երաժշտ՝. Պյոտր Չայկովսկու
- «Փոքրիկ ձիավորը» երաժշտ՝. Դմիտրի Կաբալևսկու
- «Ցատկապարան» երաժշտ՝. Արամ Խաչատրյանի
- «Աշնանային վալս» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Թզուկների երթը» երաժշտ՝. Էդվարդ Գրիգի
- «Քայլերգ», երաժշտ՝. Արամ Խաչատրյանի
- «Հայկական շուրջպար» երաժշտ՝. Ժողովրդական
- «Փայտե ձիուկ» ժողովրդական, մշակումը՝ Կոմիտասի
- «Փաթիլների պար» երաժշտ՝. Դմիտրի Շոստակովիչի
- «Ծաղրածու» երաժշտ՝. Դմիտրի Կաբալևսկու

Երգեցողություն

- «Կաքավիկ» խոսք՝ Հովհաննես Թումանյանի, երաժշտ.՝ Կոմիտասի
- «Հեյ, իմ նազան» ժողովրդական, մշակումը՝ Կոմիտասի
- «Սար-սար» ժողովրդական, մշակումը Կոմիտասի
- «Վարդի ծառ» ժողովրդական
- «Ոզնի» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Հավիկ» Ժողովրդական
- «Խաղաղություն» խոսք՝ Պատվական Խաչատրյանի, երաժշտ՝ Հռիփսիմե Խրիմյանի

- «Վերելակ» խոսք՝, Հասմիկ Միտոյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Սևանա թագուհի» խոսք՝, Հասմիկ Միտոյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Սկյուռիկի երգը» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Ծիլը, ծիտը մեկ էլ ես» խոսք՝ Պատվական Խաչատրյանի, երաժշտ՝. Հռիփսիմե Խրիմյանի
- «Թիթեռ» Խոսք և երաժշտ՝ Լիլիա Զալինյանի
- «Զատիկ» խոսք՝ Հասմիկ Միտոյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Սիրելի ձմեռ» խոսք և երաժշտ՝. Անահիտ Մովսիսյանի
- «Անձրև» խոսք ՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Նոր տարվա երգ» խոսք և երաժշտ՝. Հռիփսիմե Խրիմյանի
- «Շնորհավոր» խոսք և երաժշտ՝. Հռիփսիմե Խրիմյանի
- «Գաթա թխեմ» խոսք՝ Գ. Եղիկյանի, երաժշտ՝. Հռիփսիմե Խրիմյանի
- «Ծաղկազարդ» խոսք և երաժշտ՝. Հռիփսիմե Խրիմյանի
- «Տոնածառ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Նապաստակի երգը» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ՝. Էմմա Միհրանյանի
- «Շլդիկ նապաստակ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Գորտ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Զրաշուշան» խոսք՝ Հասմիկ Միտոյանի երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Թզուկի երգը» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ՝. Էմմա Միհրանյանի
- «Հեքիաթների աշխարհում» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ ՆարինեՍահակյանի
- «Նոր տարի» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Փաթիլներ» Խոսք և երաժշտ՝ Ա. Հովաննիսյանի
- «Լավաշ» խոսք՝ Հասմիկ Միտոյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Բարության ծառ» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյամի
- «Աշուն» խոսք և երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Աշուն» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Աշուն» խոսք՝ Ա. Ստեփանյանի, երաժշտ.՝ Ա. Հովհաննիսյանի
- «Նռան երգը» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- “Ծիածան» խոսք և երաժշտ.՝ Լիլիա Զալինյանի
- «Մայրիկն այսօր ուշացել է» խոսք՝ Սուրեն Մուրադյանի,երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Հովանոց» խոսք՝ Հասմիկ Միտոյանի երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Իմ ձիուկը» խոսք և երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
- «Ունեմ խոսք» խոսք՝ Մարիետա Սահակյանի, երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
- «Ձմեռ պապի շուտ արի խոսք և երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի

- «Զատիկ» խոսք՝ Մարիետա Սահակյանի, երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
- «Բարև, տերև» խոսք՝ Մարիետա Սահակյանի, երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
- «Անձրևից մի վախեցեք» խոսք և երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
- «Գարնան գույները» խոսք՝ Տ. Զաքարյանի, երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
- «Ես և շնիկը» խոսք և երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
- «Աշուն է» խոսք՝ Արևշատ Ավագյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Տիկնիկ ծաղրածուն» խոսք՝ Լյուդվիգ Դուրյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Ձյունը» խոսք՝ Սիլվա Կապուտիկյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Նունիկի փիսիկը» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ՝. Նարինե Սահակյանի
- «Տեսեք ձյունը գալիս է» խոսք և երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
- «Այ իմ սոխակ» խոսք՝ Մարիետա Սահակյանի, երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի
- «Անձրև անձրև» խոսք և երաժշտ.՝ Ալվարդ Մանդակունյանի

Երաժշտառիթմիկ շարժումներ, պար, խաղ

- «Հոյ նազան» Ժողովրդական
- «Նորվեգական պար» երաժշտ՝. Էդվարդ Գրիգի
- «Հայկական շուրջպար» Ժողովրդական
- «Ջան ծաղիկ» Ժողովրդական
- «Մեզ հյուր են եկել»
- «Ճանաչիր նվագարանը»
- «Տաք և սառը»
- «Արձագանք»
- «Ու՞ր է գնում տիկնիկը»
- «Աքլորը» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի, բեմականացումը՝Կարինե Ղազարյանի
- «Գնդակով խաղ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի,բեմականացումը՝ Կարինե Ղազարյանի

Նվագ բնական, մանկական նվագարաններով

Նվագարաններով կամ ծափերով վերարտադրել սովորած երգերի ռիթմական պատկերը:

Մատների մարզանք, երաժշտական թերապիա բաժինների երաժշտությունը ընտրում էերաժշտության դաստիարակը՝ հաշվի առնելով երեխաների նախասիրությունը:

Վերջնարդյունքներ (Հապավում՝ Ե)

Ունկնդրում

- ունկնդրի ստեղծագործությունը,
- ընկալի ստեղծագործությունը,
- մտապահի ստեղծագործությունը,
- հուզականորեն արձագանքի ստեղծագործությանը,
- ունկնդրի ստեղծագործությունը սկզբից մինչև վերջ,
- ցանկանա ունկնդրել ընկերների կատարումը,
- հետաքրքրություն ցուցաբերի երաժշտության նկատմամբ,
- որոշի երաժշտության բնույթը,
- ճանաչի ծանոթ երաժշտական ստեղծագործությունները,
- արտահայտի երաժշտական ստեղծագործություններից ստացածտպավորությունները,
- որոշի երաժշտական ստեղծագործությունների արտահայտչամիջոցները՝դինամիկան, տեմպը, ուժգնությունը,
- տարբերակի երաժշտական հնչյունները ըստ բարձրության (բարձր, ցածր),
- կռահի ստեղծագործությունը տարբեր հատվածներից,
- տարբերի երաժշտության ժանրերը՝ (երգ, պար, քայլերգ):

Ձայնավարժություն, երգեցողություն

- երգի ճիշտ շնչառությամբ,
- որոշի երգի բնույթը,
- ճանաչի ծանոթ երգերը նախանվագից, մեղեդուց,երգի տարբեր հատվածներից,
- երգի արտահայտիչ՝ փոխանցելով երգի բովանդակությունը,
- երգի առանց լարվածության,
- երգի մեղեդին ուժեղացնելով կամ մեղմացնելով՝մաքուր տոնայնությամբ,
- սկսի և ավարտի երգը երաժշտության դաստիարակի հետ,
- արտասանի երգի բառերը հստակ,
- երգի գործիքային նվագակցությամբ, կամ առանց դրա,
- երգի որպես մենակատար,
- երգի խմբով,
- իմանա, թե ինչ է երգչախումբը,
- կատարի երգը ստեղծագործության բովանդակությանը համապատասխաննկարներին նայելով:

Երաժշտաշարժական վարժություններ

- շարժվի երաժշտության բնույթին համապատասխան,
- շարժվի երաժշտության մասերի փոփոխությանը համապատասխան,

- ինքնուրույն փոխի շարժումները երաժշտությանը համապատասխան,
- կատարի քայքի տեսակները,
- քայլի զույգերով,
- կազմի շրջան՝ մեծացնելով և փոքրացնելով այն,
- քայլի տարբեր ուղղություններով,
- կանգ առնի երաժշտության ավարտին:

Պար

- Կատարի պարային շարժումներ (պտույտներ մենակ, զույգերով, շուրջպար),
- պտտվի ձեռքերը ճոճելով,
- դաստակով կատարի պտույտներ,
- կատարի ժողովրդական պարերեի տարրերը,
- պարի առարկաներով,
- օգտագործի ծանոթ պարային շարժումները ազատ պարերում:

Խաղ

- Արտահայտիչ կերպով փոխանցի կենդանիներին բնորոշ շարժումները,
- օգտագործի դիմախաղը ստեղծագործություններում (զվարճալի կամ տխուր նապաստակ, խորամանկ աղվես, զայրացած գայլ),
- բեմադրի փոքրիկ երաժշտական ներկայացումներ,
- բեմականացնի երգը,
- բեմականացնի պարը,
- բեմականացնի խաղը:

Նվագ մանկական նվագարաններով

- կատարի պարզ ռիթմիկ պատկերներ,
- տարբերակի երկար և կարճ երաժշտական հնչունները,
- նվագի մանկական նվագարաններով պարզ մեղեդիներ (գդալ, դափ, չխչխկան),
- իմանա նվագարանների անվանումները ճանաչի նվագարանների հնչերանգները,
- իմանա, թե ինչ է նվագախումբը:

Հորինում (իմպրովիզացիա)

- հորինի պարզ մեղեդիներ,
- ցուցադրի իր ստեղծագործական ունակությունները (տերևները պտտվում են, ձյան փաթիլները թափվում են),
- հորինի պարի շարժումներ, խաղի հերոսներին բնորոշ շարժումներ:

Մատների մարզանք

- կատարի մատների մարզանք՝ ընդգծելով երաժշտության բնույթը, տեմպը ռիթմը:

Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)

- կարողանա միաժամանակ երգի պարելով,
- պարի նվագելով,
- երգի նվագելով:

Երաժշտական թերապիա

- աչքերը փակ կամ օրորվելով ունկնդրի մեղմ երաժշտություն, լսի բնության ձայները՝ թռչունների ծլվլոց, առվակի քչքչոց, մեղուների բզզոց և այլն՝ կատարելով համապատասխան շարժումներ,
- մատներով օդի մեջ ցույց տա ծառից թափվող տերևներ, արև՝ իր ճառագայթներովև այլն՝ երաժշտության ռիթմին համապատասխան:

Բովանդակություն

Ունկնդրում - ուրախ, տխուր ինտոնացիաներ, հակադիր երաժշտության փոփոխություն, ռիթմ, ռեգիստր, տեմպ, ուժգնություն, հնչերանգ, մեղեդի:
Կոմպոզիտորներ, նրանց ստեղծագործությունները:
Ազգային տոներ, ավանդույթներ, ծեսեր:

Ձայնավարժություն, երգեցողություն - ճիշտ կեցվածք և շնչառություն, հնչեղ ձայն,մաքուր ինտոնացիա, արտահայտիչ դիմախաղ, երգչային առոգանություն, խոսքերի հստակ արտասանություն, հնչյունների անվանումները:
Երգչախումբ, երգի տեսակները:
Երաժշտաշարժական վարժություններ - երաժշտառիթմիկ գործունեությանհմտություններ, կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ

Պար - քայլքի տեսակներ, պարային դիրքեր, պարային շարժումներ, թռիչքներ,պտույտներ, ծափեր,պարի բեմադրում

Խաղ - երաժշտական դիդակտիկ խաղերգեր, հեքիաթի հերոսների նմանակում երաժշտության ներքո

Նվագ բնական, մանկական նվագարաններով- բնական, մանկական նվագարաններ,դրանց անվանումները, հնչերանգները, նվագախմբի ստեղծում

Հորինում (իմպրովիզացիա) - երաժշտառիթմիկ պատկերների, պարզ մեղեդու, պարային շարժումների, երաժշտական խաղի հորինում

Մատների մարզանք - մատների մարզանք երաժշտության բնույթին, տեմպին, ռիթմին համապատասխան

Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում) - երգել պարելով, պարել նվագելով,երգել նվագելով

Երաժշտական թերապիա -առողջական համակարգի խթանում, լարվածությանվերացում:

Գործունեության ձևեր՝

- Պարապմունք
  - ունկնդրում,
  - ձայնավարժություն, երգեցողություն,
  - երաժշտաշարժական վարժություններ,
  - պար,
  - խաղ,
  - նվագ մանկական նվագարաններով,
  - հորինում (Իմպրովիզացիա)
  - մատների մարզանք
  - երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)
  - երաժշտական թերապիա
- Տոն և զվարճալիք.
- Զբոսանք, էքսկուրսիա.
- Մշակութային այցեր.
- Երաժշտությունը առօրյայում.

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝
Շ-ժգ,է, ԽՀ-բ,գ,զ,թ,ժ, Ի-ա,բ,գ,դ, ՀՍԱ-ա,բ,գ,դ,ե,զ,է,թ , ԻԱԱ-ա,բ,գ,դ,է

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Միջին տարիքային խմբում ծրագրի «Կերպարվեստ և կառուցողական աշխատանք»ծրագրային բաղադրիչը նպատակաուղղված է

- ✓ զարգացնելու 4-5 տարեկան սաների գեղագիտական ընկալումը, գեղագիտական ճաշա-կը,
- ✓ մշակելու իրական երևույթների ու առարկաների նկատմամբ հուզազգայական վերաբեր-մունք,
- ✓ զարգացնելու գեղարվեստաստեղծագործական ունակությունները,
- ✓ ձևավորելու պատկերացումներ կերպարվեստի ստեղծագործությունների վերաբերյալ,
- ✓ զարգացնելու գեղագիտական պատկերացումները:

Խնդիրներն են՝

Նկարչություն

- ✓ Սովորեցնել նկարել առանձին առարկաներ և այդ առարկաների պատկերներին ավե-լացնելով այլ պատկերներ՝ ստանալ թեմատիկ կոմպոզիցիաներ:
- ✓ Սովորեցնել նկարել տարբեր առարկաներ, կատարել համեմատական վերլուծութկունառարկայի ձևի /շրջան, ձվածիր, քառակուսի, եռանկյուն, ուղղանկյուն / մեծության, դիրքի, կառուցվածքի վերաբերյալ:
- ✓ Սովորեցնել երեք հիմնական գույներից ստանալ նոր գույներ և նրբերանգներ:
- ✓ Շարունակել սովորեցնել նկարել բնօրինակից, մտահղացմամբ և երևակայությամբ պատկերել պարզ թեմաներ՝ ընդգծելով առարկաների հիմնական հատկանիշները՝կառուցվածքը, գույնը, ձևը:
- ✓ Սովորեցնել կառուցել բազմաձև նախշեր, պատկերներ և կոմպոզիցիաներ՝ երկրաչափա-կան ձևերի, գծերի, բծերի, կետերի, հպումների, վրձնահարվածների միջոցով:
- ✓ Շարունակել ծանոթացել ոչ ավանդական նկարչական տեխնիկաներին՝ կնիքով, տերևներով, կափարիչով, թելերով, ճմրթված թղթով և այլ հասանելի միջեցներով : ***Ծեփակերտում***
- ✓ Ծանոթացնել կերտաձողի օգտագործման եղանակներին և հնարներին:
- ✓ Շարունակել սովորեցնել ծեփակերտել պարզ կառուցվածք ունեցող առարկաներ:
- ✓ Շարունակել սովորեցնել ծեփել ըստ նմուշօրինակի:
- ✓ Սովորեցնել գնդի տափակեցման միջոցով ստանալ շրջանաձև բլիթ և այլն:
- ✓ Շարունակել սովորեցնել դետալներ ծեփելու, միմյանց միացնելու և ստացված հատվածըհարթեցնելու միջոցով ստանալ տարբեր առարկաներ / սունկ, ծաղիկ,

մարդուկ, նապաստակ:/

- ✓ Զարգացնել ծեփակերտման միջեցով դեկորատիվ կիրառական արվեստի պարզագույննմուշներ ստանալու կարողություն:
- ✓ Շարունակել սովորեցնել ծեփել և զարդանախշել սպասք: Զարդանախշել երկրաչափա-կան պատկերներ՝ լրացուցիչ և օժանդակ նյութերով:
- ✓ Զարգացնել ծեփակերտման միջոցով տարբեր առարկաներ ստեղծելու կարողությունը՝միավորելով դրանք ընդհանուր կոմպոզիցիայում, օգտվելով արդեն ծանոթ ծեփա- կերտման եղանակներից և հնարներից:

Ապլիկացիա

- ✓ Ձևավորել մկրատը ճիշտ բռնելու և դրանից օգտվելու կարողություններ, ուսուցանել մկրատով թուղթ կտրելու տեխնիկան. ձևավորել թուղթը ուղիղ, կարճ, երկար զոլակներկտրելու հմտություններ:
- ✓ Սովորեցնել զոլակներից կազմել տարբեր պատկերներ (ցանկապատ, նստարան, աս-տիճան, ծառ, թուփ և այլն):
- ✓ Սովորեցնել սոսնձել փոքր դետալները հիմնական մասերին:
- ✓ Սովորեցնել կտրելով ստանալ քառակուսի պատկերից շրջանաձև պատկեր, ուղղ- անկյունից՝, մկրատով կորացնելով անկյունները՝ օվալաձև /բանջարեղեն, մրգեր, հա-տապտուղներ, ծաղիկներ/:
- ✓ Զարգացնել ապլիկացիայի եղանակով պատկերներ ստանալու (թռչուններ, կենդանիներ,ծաղիկներ, միջատներ, տնակներ) կարողությունը:
- ✓ Զարգացնել պատրաստի երկրաչափական ձևերից տարբեր պատկերներ ստանալու կարողությունը: Սովորեցնել ձևափոխել դրանք՝ կտրելով բաժանել երկու, չորս մասերի (շրջանը բաժանել կիսաշրջանների, քառակուսին՝ եռանկյունների):

Կառուցողական աշխատանք

- ✓ Ձևավորել շինարարական նյութերը ճանաչելու, անվանելու կարողություններ (աղյուս,խորանարդ)՝ հաշվի առնելով դրանց հատկանիշները (ամրություն, ձև, չափ):
- ✓ Վերլուծել կառույցը՝ առանձնացնելով հիմնական մասերը, տարբերել դրանց հարաբերական չափը և ձևը, որոշել տարածության մեջ դրանց դասավորվածությունը,մեկը մյուսի նկատմամբ հարաբերությունը (պատեր, տանիք, ծածկ, մեքենայում՝ խցիկ,թափք և այլն):
- ✓ Սովորեցնել ինքնուրույն չափել կառույցն ըստ երկարության, բարձրության,լայնության՝ պահպանելով դաստիարակի կողմից

ներկայացված պահանջը(«Կառուցի՛ր այսպիսի տուն, բայց ավելի բարձր):

- ✓ Զարգացնել ինչպես մանր, այնպես էլ խոշոր շինարարական նյութերով կառույցներ՝ստանալու կարողությունը՝ օգտագործելով տարբեր գույների դետալներ:
- ✓ Պատրաստել աշխատանք բնական նյութերով (չոր ճյուղեր, աշնանային տերևներ,կոներ, շագանակ, ընկույզի կեղև, ծղոտ և այլն):
- ✓ Կատարել թափոններով աշխատանք՝ ծեփոն, թելերից մնացած կոճեր, տարբերտեսակի փոքր տուփեր և այլ առարկաներ:
- ✓ Շարունակել սովորեցենլ աշխատել թղթով: Ուղղանկյուն թուղթը ծալել երկտակ՝ համատեղելով կողմերն ու անկյունները և ստանալ տարբեր կերպարներ՝ կենդանիներ,ծաղիկներ և այլն:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ (Հապավում՝ ԿԿԱ)

Նկարչություն

- ✓ Պատկերի առանձին առարկաներ և այդ առարկաների պատկերներին ավելացնելով այլպատկերներ՝ ստանա թեմատիկ կոմպոզիցիաներ:
- ✓ Պատկերի տարբեր առարկաներ, կատարի համեմատական վերլուծություն առարկայիձևի, մեծության, դիրքի, կառուցվածքի վերաբերյալ:
- ✓ Ստանա նոր գույներ և նրբերանգներ:
- ✓ Նկարի բնօրինակից 1-3 առարկա:
- ✓ Պատկերի բնօրինակից, մտահղացմամբ և երևակայությամբ պարզ թեմաներ՝ ընդգ-ծելով առարկաների հիմնական հատկանիշները՝ կառուցվածքը, գույնը, ձևը:
- ✓ Կիրառի ոչ ավանդական նկարչական տեխնիկաներ (ծեփոն, թելեր, ճմրթված թուղթ և այլն):
- ✓ Պատկերի առարկաներ երկրաչափական ձևերով /եռանկյուն, շրջան, ձվածիր,ուղղանկյուն, քառակուսի/:
- ✓ Պատկերի առարկան ըստ նմուշօրինակի և բնօրինակի:
- ✓ ընտրի տարբեր գույներ՝ կարմիր, դեղին, կանաչ, կապույտ, սև, սպիտակ,շագանակագույն:
- ✓ Նկարելիս կիրառի տարբեր գույներ :
- ✓ Օտագործի տարբեր նկարչական նյութեր:

Ծեփակերտում

- ✓ Ստեղծի ծեփակերտման միջոցով տարբեր առարկաներ՝ միավորելով դրանքընդհանուր կոմպոզիցիայի մեջ:
- ✓ Ծեփակերտի պարզ կառուցվածք ունեցող առարկաներ:
- ✓ Ծեփակերտի ըստ նմուշօրինակի:
- ✓ Ստանա դետալներ ծեփելու, միմյանց միացնելու և ստացված հատվածը հարթեցնելումիջոցով տարբեր առարկաներ / սունկ, ծաղիկ, մարդուկ,

նապաստակ:/

- ✓ Ծեփակերտման միջոցով ստանա դեկորատիվ -կիրառական արվեստի պարզագույնմուշներ՝ սափոր, ծաղկաման:
- ✓ Ծեփի և զարդանախշի սպասք:

Ապլիկացիա

- ✓ Օգտագործի մկրատ , թղթից կտրի ուղիղ, կարճ, երկար զոլակներ :
- ✓ Օգտագործի մկրատ՝ կտրելով ուղիղ գծով և անկյունագծով:
- ✓ Զոլակներից ստանա տարբեր պատկերներ (ցանկապատ, նստարան, աստիճան, ծառ,թուփ և այլն):
- ✓ Քառակուսի պատկերից ստանա շրջանաձև պատկեր, ուղղանկյունից՝ ձվածիր մկրատով կորացնելով անկյունները՝ օվալաձև (բանջարեղեն, մրգեր, հատապտուղներ,ծաղիկներ):
- ✓ Ստանա, փակցնի պատկերներ՝ թռչուններ, կենդանիներ, ծաղիկներ, միջատներ,տնակներ:
- ✓ Պատկերի ՀՀ դրոշը:
- ✓ Ստանա զարդանախշ՝ պահպանելով գույնի և նախշի ռիթմիկ դասավորվածությունը:
- ✓ Աշխատի մաքուր և կոկիկ:
- ✓ Դրսևորի համատեղ գործելու պատրաստակամություն:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- ✓ Ճանաչի, անվանի շինարարական նյութերը (աղյուս, խորանարդ), հատկանիշները(ամրություն, ձև, չափ):

- ✓ Վերլուծի կառույցը՝ առանձնացնելով հիմնական մասերը, տարբերի դրանց հարաբերական չափը և ձևը, որոշի տարածության մեջ դրանց դասավորվածությունը, մեկը մյուսի նկատմամբ հարաբերությունը :
- ✓ Կառուցի ինչպես մանր, այնպես էլ խոշոր շինարարական նյութերով:
- ✓ Օգտագործի բնական նյութեր (չոր ճյուղեր, աշնանային տերևներ, կոներ, շագանակ, ընկույզի կեղև, ծղոտ, ավազ և այլն):
- ✓ Կատարի աշխատանք թափոններով՝ ծեփոն, թելերից մնացած կոճեր, տարբեր տեսակի փոքր տուփեր և այլ առարկաներ:
- ✓ Կատարի աշխատանք թղթով: Ուղղանկյուն թուղթը ծալի երկտակ՝ համատեղելով կողմերն ու անկյունները և ստանա տարբեր կերպարներ՝ կենդանիներ, ծաղիկներ և այլն:

Գործունեության ձևեր՝

Խաղեր

- Պարապմունքներ.
- Մշակութային այցեր.

Զբոսանք, էքսկուրսիա.

Ինքնուրույն գործունեություն.

Փորձարարություն.

- Աշխատանք կենտրոններում.
- Ինքնասպասարկում:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝
Շ (թ), ԽՀ- (բ), (գ), (ը), (թ), Ի-(բ),(գ),(դ),(ե),(է), ՀՍԱ- (ա), (բ), (գ), (դ), (ե), (զ),(է),ԻԱԱ - (ա),(բ) (ե) (զ), (է):

ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպումը պայմանավորված է զարգացնող առարկայական միաջավայրի առկայությամբ: Միջին խմբի 4-5 տարեկանների կրթական հիմնական ծրագրի լիարժեք իրականացման և ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է պահպանել զարգացնող միջավայրին ներկայացվող հետևյալ պահանջները՝

1. սաների ճանաչողական հետաքրքրությունների, իմացական կարողությունների զարգացման, սյուժետադերային խաղերի, ինքնուրույն գործունեության համար խմբասենյակում տարատեսակ խաղալիքների, պարագաների, դիդակտիկ նյութերի առկայություն,
2. երաժշտական գործիքների, խաղային նյութերի և սարքավորումների առկայության ապահովում երեխաների երաժշտական ունակությունների զարգացման համար ,
3. սաների կերպարվեստային գործունեության համար անհրաժեշտ պարագաների ապահովում,
4. զբոսանքների ընթացքում համապատասխան խաղամիջոցների, աշխատանքային գործիքների ապահովում.
5. ֆիզիկական զարգացման, առողջության պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների առկայություն,
6. թատրոնների տարաբնույթ տեսակների (ստվերային, ստվարաթղթային, սեղանային և այլն), թատերական բեմականացումների համար անհրաժեշտ պարագաների առկայություն,
7. խմբասենյակում և դրանից դուրս ստեղծված անհրաժեշտ պայմանների առկայություն՝ շարժողական խնդիրներ ունեցող սաների համար. հարմարեցված աթոռ սեղանով, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք (սպասքի ադապտացիաներ), հարմարեցված գրենական պիտույքներ,
8. մեդիագրագիտության իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների առկայություն,
9. սաների ինտելեկտուալ զարգացման համար խաղերի (դոմինո, շաշկի և այլն) առկայություն,
10. ազգային պատմությունն ու մշակույթը նկարագրող պաստառների, պետական

խորհրդանիշների անկյան (դրոշ, զինանշան, օրհներգ)առկայություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ Օրենք,
2. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ Երևան, 2021թ.
3. Առաքելյան Ռ., Շարժախաղեր, Երևան, 2009 թ.
4. Ավետիսյան Ժ Կերպարվեստ /4- տարեկաններ/Երևան, 2020թ.
5. Ավետիսյան Ժ. Ոչ ավանդական նկարչություն, Երևան, 2020թ.
6. Ավետիսյան Ժ. ,Ոչ ավանդական նկարչություն Երևան, 2020թ.
7. Զիմինա Ա.Ն., Երաժշտական դաստիարակության և զարգացման հիմքերը, «Վլադոս», Մոսկվա, 2000թ.:
8. Լուսինյան Ա,Կ.Ղազարյան, Երաժշտությունը մանկապարտեզում,Երևան, 2009թ.,
9. Հարությունյան Հ., Ս. Չիբուխչյան, Մաթեմատիկայի իմ այբուբենը, մաս 1,2, Երևան, 2007 թ.:
10. Հարությունյան Հ.,Ս., Խաղալով սովորենք մաթեմատիկա, Երևան, 2003 թ.
11. Հովեյան Ս., Հայկական ազգային շարժախաղերը նախադպրոցական կրթական համակարգում, Երևան, 2010 թ.,
12. Ղազարյան Կ, Երաժշտադիդակտիկ խաղեր, Երևան, 2007թ,
13. Մանկապարտեզի միջին խմբի /4-5տարեկանների/ կրթական համալիր ծրագիր /Հ. Միտոյան և ուրիշներ, ՀՀ ԿԳՆ, Կրթ.ազգ. ինստ.,-Եր., Կրթ. ազգ. ինս.-տ, 2011.-168 էջ,
14. Մանուչարյան Ս. Նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակությանն ուղղված աշխատանքների առանձնահատկությունները, Երևան 2003թ.
15. Մարության Ս.Ա., Դալլաքյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008, 288 էջ,
16. Մարտիրոսյան Գ, Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, Եր., 2002 թ.,
17. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Եր., 2010թ.,
18. Միտոյան Հ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Եր., 2020թ.,
19. Марковская М.М Уголок природы в детском саду-2006г.
20. Артемьева. А.А. В.В.Гаврилова, Декоративное рисование, Волгоград 2011г.
21. БелошистаА.В Формирование и развитие математических способностей дошкольников М.Владос 2004
22. Божович Л. И. Личность и ее формирование в детском возрасте–Санкт-Петербург : Питер, 2009. – 400 с
23. Венгер Л. А. «Готов ли ребенок к школе», М.: Знание, 1994. – 192 с.

24. Куцакова Л.В., «Занятия по конструированию из строительного материала», Москва 2007 г.
25. Лыкова И.А, Азбука лепки, Москва 2005 г.

26. Лыкова И.А. ИЗОдеятельность в детском саду, Москва, 2009г.
27. Малышева А.Н, Н.В. Ермолова, Аппликация в детском саду, Ярославль, 2002 г.
28. Нетрадиционные техники рисования в детском саду, Г.Н. Давыдова, Москва 2007г.
29. Новикова И.В., Конструирование из природного материала в детском саду, Ярославль 2009 г.
30. Обухова, Л. Ф. Возрастная психология: учебник для бакалавров / Л. Ф. Обухова. — Москва, 1999. — 442 с.
31. Общеобразовательная программа дош. образования «От рождения до школы, Москва, 2010 г.
32. Инновационная программа от рождения до школы-Н.Веракса и другие-2019г.
33. Программа для родителей и воспитателей, Из детства — в отрочество. Москва, 2006 г.
34. Программа развития и воспитания детей в детском саду -Детство Санкт-Петербург, 2004.
35. Рисование с детьми 3-4 лет, Д.Н.Колдина, “Мозаика-Синтез”, 2008 г.
36. Узорова О,Нефедова “1000 упражнений для подготовки к школе”М., 2002.
37. Ушакова О., Е.СтрунинаЂМетодика развития речи детейЂ-Москва,2004г
38. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152575&fbclid=IwAR1eEM6ai3gNAKwDCNr7qWigPZqcySUxreMVrpUAanhhYBtJT3v1UwaWPJE»: